




Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերմագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported CC BY NC SA License.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ժամկետային ձևաչափով կամ կաշիով  
մեղմելով կամ ոչ/աղբյուրն անհրաժեշտ է հիշելու իրավունք

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format  
Adapt – remix, transform, and build upon the material

Ա. ՀԱՏՈՐ

# ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ

ԵՐԳԱՐԱՆԸ



Հեղինակությունքեամբ

ՍՄԲԱՏ ԱԻԱԳԵԱՆԻ

(SAM AVAKIAN)



ԼՕՍ ԱՆՃԵԼԸՍ, ՓԱԼԻՖ.

1926



891.99

3095

К-77


Удмурт У.

Бршур удмурт. бршур  
руч.



891.99  
4-77

ՀԱՅԿԱՅԻՆ Է 1961 Ք.



Ա. ՀԱՏՈՐ

# ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ

ԵՐԳԱՐԱՆԸ



Հեղինակություն

ՍՄԲԱՏ ԱԻԱԳԵԱՆԻ

(SAM AVAKIAN)


3095

A 26850




ԼՍՍ ԱՆՃԵԼՈՒԹՅԱՆ

1926









## ՅԱՌԱԶԱԲԱՆ

Պատանի Հասակիցս սիրում էի բանաստեղծութիւնը: Իմ նախկին Հնարած երգերը եւ տաղերը, ուրախութեան եւ երջանկութեան շուրջ կը դառնար, պատճառ, որովհետեւ, կեանքիս մէջ այդ էի վայելած ու սովորած: Այդ օրերից միայն մի երգ դեռ կը յիշեմ որ սկսւում էր այսպէս. «Աչքերդ թուխ, ունկերդ կամար, աղջիկ դէպի ինձ արի» որին կը հանդիպէ երգարանի մէջ, իսկ միւսները կորցրած էի, որոնք նոյնպէս խաղ եւ խնդում էին պարունակում: Սակայն, այդ երջանիկ օրերս շուտ հեռացան ինձանից, տնտեսական պայմաններից ստիպւած, ես անցայ Ամերիկայ, եւ երբ ճաշակեցի օտարութեան կեանքը, իմ մէջ տարբերութիւնը մեծ եղաւ: Վրայ հասաւ Եւրոպական պատերազմը, որի հետեւանքը իմ ընտանիքի շարքերի մէջ երկրում, եւ ինձ էլ այստեղ աշխարհն աղէտալի եղաւ, որ անկարելի էր գտնում երկտողովս բացատրել մանրամասն: Այդ ծայրահեղ դժբախտութիւնս այն աստիճան յուսահատութեան մատնեց ինձ, որ ես ամեն երանութիւնս կորցրած էի տեսնում:

Այդ տխուր փոխոխութիւնը ոչ մի միտքարական կողմերը ունէր, այնուհետ, գրիչս ձեռքս առած երգերի էի վերածում դժբախտութեանս եւ անոր պատճառները: Քանի որ այդ պարագան ինձ առատ նիւթ էր տալիս, ես շարունակում էի գրել, միեւնոյն ժամանակ մի նպատակ յղացաւ մտքիս մէջ, երգերս





գրքի վերածել, օգուտ ծննդավայրիս, Տաւշան-  
Ղչլաղ գիւղի դպրոցին: Երկար ժամանակ այդ  
ուխտս մնում էր անկատար լռութեան մէջ, սակայն,  
հիմա, գոհութիւն Աստուծոյ, հազար նպատակնե-  
րիցս միայն սա է որ կատարւում է: Ես ինձ բարե-  
բաղդ եմ զգում, ահա նուիրատուութիւնով այն աս-  
տիճան, որ կարծես թէ բոլոր իմ կորցրած փառքերս  
վերագտնում եմ կրկին: Իմ այս աստիճան դժբախ-  
տանալս եւ անոր պատճառները նկատի առնելով, եւ  
որպէս կեանքի այդպիսի հոսիք անցնող մը ու փոր-  
ձառու, ես ամեն միջոցներ գործ դրել եմ գրելու նաեւ  
խրատներ իմ դասերից, որոնք միշտ օգտակար կը  
լինին ընկերական կեանքի ու այլեւայլ պայմանների  
մէջ: «ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ»ը բոլոր իմ բանաստեղծու-  
թիւններն են, սրա մէջ ոչ մի հաւաքածոյ կան: Այս  
բանաստեղծութիւնները ամեն մէկը կարելի է երգել,  
առանցին նօդայի սովորական եղանակով միայն:

Կը սիրեմ յուսալ, որ ամեն ընթերցող պիտի գը-  
նահատէ ու քաջալերէ դպրոցի օգտի այս երգարանը  
որ արդիւնք է նիւթական ու բարոյական մեծ գոհո-  
ղութիւններու:

ՍՄԲԱՏ ԱՒԱԳԵԱՆ





ՍՄԻԱՏ Յ. ԱԻԱԳԵԱՆ

Հ. Բաղ. Գ. Կարապետ.

Ամեն իրաւասութիւն  
Վերապահուիլ







## Ն Ե Ր Բ Ո Ղ

«ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ» Երգարանս ամբողջութեամբ նուիրում եմ օգուտ ծննդավայրիս, Տաւշան-Ղշլաղ գիւղի դպրոցին: Տարիներ իմ ուխտս սրանով կատարւած եմ տեսնում, թէ եւ իմ անձնական փառքերս իսպառ կործրած լինելով մէկ տեղ, բայց, այնուամենայնիւ, այս նուիրատուութիւնով իմ խոցուած սրտի մեռած կողմերը, ուրախութենէս վերակենդանանում են:

Գիրքը տպագրութեան չանձնելու համար, իմ առջեւ կարգ մը դժուարութիւններ էին ցցվում, որոնց դիւրութիւն տուեց իմ դրացի Պ. Բարդողիմեսոս Չատիկեանը, եւ իր բուն աշխատանքով գործի կատարելութիւնը արագացրեց: Բ. Չատիկեանի այդչափ ազնիւօրէն ցուցուցած քաջելերութեան համար ուրիշ ոչինչ ունիմ վճարելու, բացի իմ սրտի խորին շնորհակալութիւններս:

ՍՄԲԱՏ ԱՒԱԳԵԱՆ

Լ.Օս Անճէլիս, Գալիֆ.  
Յունվար 1, 1926





# “ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ”

---

## Ն Ե Ր Բ Ո Ղ

Փոքր նուէր դու սրտէս բխած  
Իմ նոր երգարան.

Փառք որ տեսայ քեզի լոյս տեսած  
Իմ նոր երգարան:

Տանջանքներով հնարի քեզ  
Սրտովս աւերակ,  
Ընծայում եմ քեզ աշակարտաց,  
Իմ նոր երգարան:

Մարդիկ գումարի տէր են դառել  
Շատերը աղքատ.

Երբեմն աշխարհ են կառավարել  
Անկախ ու ազատ.

Բա՛ւ է օտար երկրում ապրես  
Այլոց հպատակ,

Քեզ հայրենիք դրկել եմ վնոած,  
Իմ նոր երգարան:

Խօսիր նպատակդ այս աւուր,  
Իմ նոր երգարան.

Ճամարիտին մի բամբասէ գուր  
Իմ նոր երգարան:

Հոգ չէ որքան նոր ուսեալ կան,  
 Ինչ կուգէ կարծեն  
 Նպատակդ է մեծ գնահատուած  
 Իմ նոր երգարան:

Երգիչ Սմբատ մաքուր սրտով,  
 Սիրէ երեխան.  
 Պարտականութեան նիւտ կանոնով  
 Կատարէ աշխատանք.  
 Գանձի տէր չեմ, որ գումարով  
 Թողնէի յիշատակ.  
 Քեզնով եմ զգում փափաքս առած,  
 Իմ նոր երգարան:

—†—

## Ո՛Վ ԴԵՌԱՀԱՍ

Ո՛վ դեռահաս, երկու անգամ աշխարհ չես գայ, լաւ գիտցիր.  
 Միշտ հանապազ այդպէս դեռահաս չես մնայ, լաւ գիտցիր.  
 Քանի բազուկներիդ ուժ կայ, աշխարհի մէջ կեանք վարէ,  
 Վերջը գանգատաւոր կ'եղնիս, դուն քեզ վերայ, լաւ գիտցիր:

Աշխարհի բոլոր զարդերը, քեզ համար են դեռահաս.  
 Տիրոջ մօտ, իմ ու քո չկայ, ջանք դիր որ մաս ունենաս.  
 Վայելչութեան տէրն յայտնի չէ, ով ինչ կ'ասէ չհաւատաս.  
 Հագիր, կապէ, կեր ու խմէ, միայն պատուել լաւ գիտցիր:

Երգիչ Սմբատս խօսում եմ նիւտ խրատներ քո շահիդ.  
 Թէ մտնես երգիս կեանքի մէջ, տալում եմ քեզ մարգարիտ.  
 Ուխտդ օրից օր քցելով կը հասնիս մահազանգիդ.  
 Էլ չես մնայ դու այս աշխարհ, բաժանվելիդ լաւ գիտցիր:



## ԳԻՏՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Բոլոր ծածուկները սրտիս,  
Պարգաբանում եմ ձեզ լսէք.  
Եկած անցածները գլխիս,  
Այս իմ երգարանէս լսէք:

Մաս մը յարգանք ու խրատներ,  
Մաս մը կատակ ու առակներ,  
Մաս մը սիրոյ հառաչանքներ,  
Յատուկ իմ բերանէս լէսք:

Այս իմ երգարանս ընկերներ,  
Ունի քանի տարբեր պատկեր,  
Ամբողջ երգերս ձեզ նվէր  
Բայց երգիչ Սմբատէս լսէք:


— † —

## ԿԱՏԱՐԵԱԼ ՄԱՐԴԸ

Մարդս կատարեալ վարք ազնիւ անունով,  
Ամեն կերպով իրեն յարգանք կը բերէ.  
Նա իւր սիրտը մաքուր աշխատութիւնով  
Ինքն իրեն չափազանց հրջանք կը բերէ:

Մարդս որ ազգասէր ողորմող է նա.  
Լեզուն էլ միշտ բարի խրատող ըլլայ,  
Ուր որ յայտնի խրադհան մը կայանայ,  
Իւր կենացը բարի մաղթանք կը բերէ:

Երգիչ Սմբատ սխալմունքներդ ահագին.  
 Լսելով չեն խորիէ երգերուդ կեանքին.  
 Աշխատիր յարմարվես այն մարդի վարքին,  
 Որ ինքն իւր ազգին, պարզանք կը բերէ:



## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ամբողջ կեցութիւնդ հայրենիք  
 Աչքիս շարվէ շար կ'երեւայ.  
 Սարդ ու ֆարդ ձորդ հայրենիք,  
 Աչքիս անգին ֆար կ'երեւայ:

Քո մէջ մուրացկան մահանամ,  
 Դարձեալ սրտով կ'օժարանամ.  
 Պատդուխտ, միլիօնի տէր դառնամ,  
 Աչքիս փուշ ու կառ կ'երեւայ:

Օտար փառաւոր հագածս,  
 Կարծես թոյն լինի խմածս.  
 Քո մէջ իմ տեսած երագս,  
 Աչքիս գուտ ջուհար կ'երեւայ:

Օտար երկրում խեղճ Սմբատս,  
 Գուցցէ պանդուխտ մահանամ ես.  
 Շիրմիս վերայ ծածկող ֆարս,  
 Միշտ աչքիս օտար կ'երեւայ:



## Ե Ր Ա Ջ Ս

Ո՛վ Հայաստանի թռչուններ հիմա ազատ երգեցե՛ք,  
 Ճլվլալով թռչկոտելով, բոյներդ նորոգեցե՛ք.  
 Կերակրե՛ք ձագուկներդ Հայաստանի հունտերով,  
 Երամ կազմե՛վ դեպ Արարտ թելով ծափահարեցե՛ք:

Պտոյտ տվե՛ք իւր մերձակայ լայն տափարակ դաշտերում.  
 Գոնէ անգամ հանգիստ առե՛ք Ալագեազի լեռներում.  
 Ողջոյն տվե՛ք Սուրբ Աթոռին որ Հայի պատիւն է կրում,  
 Հայ որբերի ուրախութեան լուրը յայտարարեցե՛ք:

Մէկ օր երազիս ներկայ էի ուր որ ծնված էի ես.  
 Առաջ կռունկներին տեսայ, յետոյ հագարներ պէս պէս.  
 Խառնաւփոտ նտվտում էին կատարելով մեծ հանդէս,  
 Կարծես մէկը հրամայում էր, կարգով ջերգեա շարվեցե՛ք:

Խելք ու ուեփս գրավել էին, մի ֆանի խումբ աղաւնիք.  
 Որի բերանն վարդի թեր, որն էլ ուներ ձնծաղիկ.  
 Որը սիրունի էր փնտռում ինչ որն էլ ունէր ընտանիք,  
 Ինձ վերայ ուշադրութիւն դարցնող չեղաւ երբե՛ք:

Երգիչ Սմբատիս երազի, այս է բացատրութիւնը.  
 Երբ որ դրօշակ ծածանեց, Հայ կառավարութիւնը,  
 Կռունկների երամների պատկերի մեկնութիւնը,  
 Մեծատառերով գրված էր, կեցցե՛ք հայ ֆաջեր կեցցե՛ք:




## ԻՄ ԱՅՍ ՆԵՂՈՒԹԻՒՆՍ

Իմ այս նեղութիւնս իմ չարչարանքս,  
Մինչեւի ե՞րբ պիտի տեսէ Տէր իմ Տէր -  
Անկատար մնալով իմ նպատակս,  
Մինչեւի ե՞րբ պիտի տեսէ Տէր իմ Տէր:

Հայրից մայրից ու եղբարյից կարօտով,  
Գերդաստանից հայրենիքից կարօտով,  
Աչքերս արտասոված սիտս վշտալով,  
Մինչեւի ե՞րբ պիտի տեսէ Տէր իմ Տէր:

Երկնային գահապետ Փրկիչ զգայուն,  
Բացի Քեզնից ես չեմ դիմէ ոչ մէկուն -  
Երագելով իմ սիրուհուն օրն ի բուն,  
Մինչեւի ե՞րբ պիտի տեսէ Տէր իմ Տէր:

Տէր իմ Քո վնիռդ է հաստատուն անխախտ,  
Տվելէս բոլորին խնդութիւն անխախտ,  
Խեղն Սմբատիս տարաբաղթութեանն անխախտ  
Մինչեւի ե՞րբ պիտի տեսէ Տէր իմ Տէր:



## ՆԿԱՐԱԳԻՐ

Մատաղ ես այն բնութեանը,  
Ոչ ոքի վատ չի կամենա -  
Թշնամու նեղ դրութեանը  
Կրկին խիստ դատ չի կամենա:



Գոյթ ունեցողը իւր սրտին,  
կը հասնի իւր նպատակին,  
Հաստատ սիրողն հայրենիքին,  
Ապրիլը գատ չի կամենա:

Ով որ գաղափար ունի, նա  
Գինետներում ման չի գայ.  
Ինչ մարդ այսպէս կարողանա,  
Իր յանձն ախփատ չի կամենայ:

Երգիչ Սմբատս օտար երկրում,  
Թափառում է տխուր տրտում,  
Բաղթից գատ, ամբողջ մամուլում  
Մի բառ գանգատ չի կամենայ:

— † —

## ԱՆՁԳԱՅ ՄԵԾԱՍԻՐՏ ՄԱՐԴԸ

Անգգայ մեծասիրտ մարդուն, կատարեալ մարդ չեն ասէ.  
Ում որ խիղնը չըլլի արթուն, կատարեալ մարդ չեն ասէ.  
Բայց որ մարդս չըլլի խօսող իրականութիւնն յատուկ  
Չուսացողին յարգութիւն, կատարեալ մարդ չեն ասէ:

Մարդ կայ լեզուն փաղցրահամ, սիրտը նախանձ, արտագին,  
Չարագործութիւնն է գործը, օգուտ դէպ իւր փակին.  
Խաբեբայութեամբ ապրողին արեւի լուսնի տակին,  
Յայտարարել Հրեաներին, կատարեալ մարդ չեն ասէ:

Խարդախ մարդը միւտ խօսող է գրավիչ փաղցրագոյն.  
Ուղիղ մարդկանց երակներում սերմանում է կծութիւն.  
Երգիչ Սմբատ քո հասցէիդ խօսողները միեւնոյն,  
Հազարից երկու քնութիւն, կատարեալ մարդ չեն ասէ:



## ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

Յաջողութիւն, դու ինձ վերա փակվեցար.  
 Ինչպէս ուրիշներին հավասարնամ ես.  
 Չար թշնամու կամֆով պարպար, հատնեցար,  
 Ի՞նչ խորհրդով քեզնից օժարանամ եք:

Բաղքիս հետ միացած ինձի ատում էք.  
 Ամեն դառն վնիռներ վերա դատում էք.  
 Չեզ մօտ գալուց ետ էք մղում, զատում էք.  
 Չիտեմ ի՞նչ կերպով ձեզ սիրահանամ ես:

Սմբատս պանդուխտ եմ ձեզի իմաց տամ,  
 Յոյսս դէպի հայրենիք է ժամ առ ժամ.  
 Բա՛ղդ եւ յաջողութի՛ւն, որ ձեզ չունենամ  
 Առանց ձեզի ինչո՞վ վերադառնամ ես:

— † —

## ԲԱՐԻ ՄԱՐԴԸ

Բարի մարդը միշտ բարի է, թող յիմարը բամբասէ.  
 Յիմարի խօֆելով, նրան ոչ ոք վատդար չի ասէ.  
 Ոչ ոք գիտէ ով կիանոսում, որքան կենդանիներ կան.  
 Ո՞վ կը հաւատայ, յիմարն ասէ, այսօր մի հատ պակաս է:

Մարդկանց տեսքը բոլորովին, մէկ մէկու հաւասար չէ.  
 Նոյնպէս բնութիւնն ու լեզուն, քաղցրագոյն հաւասար չէ.  
 Մարդ չի գիտէ երկնքումը, աստղերի հաշիւն յատուկ  
 Ո՞վ կը համոզվի յիմարն ասէ մէկը մէկից դեռահաս է:

Երգիչ Սմբատ որ օրական գրես բիւրաւոր երգեր,  
 Ունենան գաղափար տվող, մարդկանց վարք ու մեծ փառքեր.  
 Որ գիտենաս լեզուները, խօսիլ ամբողջ ազգերի.  
 Գարձեալ մի մարդ չի կարծէ քեզ Զիվանից խելահաս է:



## ԲՆԱԿԱՆԻՑ ՄԻՆՁԵՒ ՀԻՄԱ

Երկու սրտեր մէկ հաւասար  
 Մէկ խորհուրդ բնութիւն չկայ.  
 Ամբողջ մարդկանց նիւթ հաւասար  
 Վարժ, ձեւ յաջողութիւն չկայ:


Ամեն մարդ կարծում է իրան  
 Ճամարտախօս գիտուն իշխան.  
 Նա որ իշխան է իսկական,  
 Նրան, լսողութիւն չկայ:

Շատ դառնացար ունայն աշխարհ.  
 Հիմա բնակիչներդ են չար.  
 Մէկ պատվել յարգելու համար  
 Պարզ սիրտ մէկից մէկուն չկայ:

Եղած բոլորնը դավանան.  
 Կարծես բնից սովորական.  
 Երկու եղբոր մէջն իսկական  
 Ազնիւ խաղաղութիւն չկայ:

Այս դարիս գիտուն մարգարան,  
 Զունի մարդկանց խրատիչ բերան.  
 Ողջ աշխարհը մի դատարան  
 Արդար դատողութիւն չկայ:

Ամեն ազգ ունի գոյգ օրէնք,  
 Դատարկ լեզվով կը տարբերինք,  
 Թէ գործներն ուղիղ փնտռենք,  
 Ոչ մի տարբերութիւն չկայ:



3095

A 26850



Ով որ խոնարհէ միշտ հանդարտ,  
 Զկայ նրան սիրող մի մարդ,  
 Թէ որ չեղնի գող կամ կախարդ,  
 Նրան կարողութիւն չկայ:

Ում որ ընտրես բեզ բարեկամ,  
 Օգնած լինիս հազար անգամ.  
 Դարձեալ նրանից դէպ բեզ մի ժամ  
 Պարզ հաւատարմութիւն չկայ:

Խօսքերն իրար հետ փաղցրաբար.  
 Իրար մատնում են չարաչար.  
 Ծնողն իրեն որդու համար  
 Կամենալ ուղղութիւն չկայ:

Զարին ընծայելով հաւատ,  
 Ընկած բարութիւնից շատ գատ,  
 Զեռք պարզելով մի կոյր ախփատ  
 Տալով ողորմութիւն չկայ:

Բնութիւնն ամբողջ ազգերի,  
 Որքան որ կան մէջն աշխարհի,  
 Պատիւ պահելու մեծերի,  
 Բնաւ սովորութիւն չկայ:

Հոգին ներկայիս մարդերի,  
 Ընկած խղների ձեռք գերի,  
 Լեզվի սրտի ու ձեռքերի  
 Զիջում, սէր, միութիւն չկայ:



Ուժեղները լաւ ձեւ ունին.  
 Ինչ կերպ ասես պատիւ ունին.  
 Արդար անուժներից մէկին  
 Իշխան ընտրողութիւն չկայ:

Մանուկը իւր ծնված օրից,  
 Կ'սկսի կրթվել նորից.  
 Իւր մեծերից հօրից մօրից,  
 Դաս տվող ուղղութիւն չկայ:

Ում որ կայ խելք սէր միութիւն,  
 Նա ունի ուժ կարողութիւն.  
 Ողջ ազգերի մէջ հայերուն,  
 Գահ, սեփականութիւն չկայ:

Սմբատ, երգելով շարունակ,  
 Զես լինի վարժով ընդունակ,  
 Կառավարես ծով ու ցամաք,  
 Քեզ մարդ հաշիվող մի տուն չկայ:

## ՈՒՆԱՅՆ ԱՇԽԱՐՀ

Ունայն աշխարհ, քեզ հետ բնաւ ընկերանալ չի լինի.  
 Քո յոյսերով, մարդ շարունակ ուրախանալ չի լինի,  
 Ոչ քեզ ատողին ես նայում, եւ ոչ էլ գուտ յարգողին,  
 Քո վնդիդ դէմ անբաւական վիճմունք բանալ չի լինի:

Կարաւանած հիւր են գալում քո տունդ ամեն ցեղեր.  
 Օր ու վայրկեան, սողունք, թռչունք եւ չորեքկենդանիներ.  
 Ամբողջին մէկ կերպ չես սիրում, երեւում է շատ տարբեր,  
 Քո մէջ կրած հոգս ու վիշտը երբէք մոռնալ չի լինի:



Կարն ժամանակ քեզ հիւր գալուց, անվերջ գործել ես տալում.  
Հին ու փլած սարայների մեզ նորոգել ես տալում,  
Վերջը ասում ես թէ, այստեղ երկար մնալ չի լինի:  
Մարդ կայ քո մէջ կեանք է վարում, մարդ կայ անվերջ գերի է.

Ամենփին մէկ կերպ գործ տալով: քեզ զարդարել ես տալում.  
Դէպ քեզ որքան որ ջանք դնեն, վերջն ունայն է ձրի է.  
Ինքդ ասում ես թէ ես ձեռն եմ, բայց պայմանդ թերի է  
Օր մըն էլ Սմբատիս կը դրկես վերադառնալ չի լինի:

## ԲԱՐԵԿԱՄ ՍԻՐՏԸ

Այսօր էլի պիտի խմէի օղին,  
Գոհ եմ առա համբերութիւն սիրտ քեզեն.  
Պատիւ յարգանք քո պէս խրատ տվողին,  
Տեսա ազնիւ ընկերութիւն սիրտ քեզեն:

Առաջ քեզ նման ինձ խրատող չկար.  
Բնա զբաղանումըս գումար փող չկար.  
Երեսիս մի նայող ինձ սիրող չկար,  
Հիմա ունիմ կարողութիւն սիրտ քեզեն:

Թէ այսպէս ինձ միշտ օղիից զատ պահես,  
Օրից օր կը դառնամ մի լաւ տղամ ես.  
Նոր կը խորհիմ որ բնութեան աղա ես,  
Կ'սպասեմ այսպէս քաջութիւն սիրտ քեզեն:

Երգիչ Սմբատս հիմա կուգայի տուն հարբած  
Մէկին պատված մի քանիսին անպատված.  
Անցած շաբթու նման դրամս պարպած,  
Ունեցայ մեծ տարբերութիւն սիրտ քեզեն:



## ԿԱՐՕՏ ԵՄ

Իմ ազնիւ միակ եղբօրէս,  
 Երկար ատեն մէկ լուր չունիմ.  
 Գթառատ ծեր հօրէս, մօրէս.  
 Երկար ատեն մէկ լուր չունիմ:

Նրանց մասին միշտ անհամբեր,  
 Մտածում եմ տիւ եւ գիշեր,  
 Հայրենիքէս իմ ընկերներ  
 Երկար ատեն մէկ լուր չունիմ:

Լսէ՛ք ծածուկները սրտէս,  
 Թող լինի ձեզ ականատես,  
 Իմ սիրելի վարդանուշէս  
 Երկար ատեն մէկ լուր չունիմ:

Խեղճ Սմբատս բաղթիցս ես  
 Զգված պանդուխտ վիճակէս ես,  
 Արաքսի ես Եփրակսի ես  
 Երկար ատեն մէկ լուր չունիմ:

## ԿԵԱՆՔԻ ԻՄԱՍՏԸ

Մարդ դրամով մարդ չի դառնա, թէ որ չունի վեհ անուն.  
 Ամեն ծաղիկ վարդ չի դառնա, թէ որ չունի հոտ ու գոյն.  
 Ամեն բան իւր արժէքն ունի, բնականից վնոված,  
 Պէտք է անշուշտ անխախտ մնայ, միշտ դարեդար մնայուն:

Ինչ որ ծառն է, նիւտ նոյնն է իւր բար վտած պտուղը.  
 Պիտի արտասովի գերդաստան կերակրող հաց թուխը.  
 Կամ կոյր կամ ախփատ կը լինի, միշտ ժուր գալող աշուղը,  
 Երգս շատերին ընծայէ, բայց գաղտնիքը չհերիճ:



Բան մը գտնելը դժվար է, միայն կորցնելն է հեշտ-  
վարժ խուզարկողները գիտեն ով է յիմար կամ պարկերետ,  
Ունայնի մէջ մահից բացի բան չկայ անհրաժեշտ,  
Կուգայ հաւասար բոլորին ոչ թէ միայն ծերերին:

Ով որ ուզենայ լինելու պարկեշտ մարդ մեծ պատվի տէր,  
Նա բնաւ պիտի չունենայ գոռոզ անզգա ընկեր.  
Երգիչ Սմբատ այսուփետեւ թէ լինիս աշխարհի տէր  
Անկեղծօրէն արդար վնիռդ կասեն որ անկանոն է:

## ԵՐԱԽՏԱՄՕՐԸ

Ով որ յանցանքի տէր մարդ է ինձ նման,  
Քայ ինձ ծանօթանայ մէկ մէկու սիրենք.  
Գործը ձախորդ բաղք չունեցողն իսկական,  
Քայ ինձ ծանօթանայ, մէկ մէկու սիրենք:

Ընկերութիւն սիրող պատվողը երկար,  
Խնջոյքներում յարգանք խօսողը երկար,  
Նրա սիրուն գումար միտողը երկար,  
Քայ ինձ թող միանայ, մէկ մէկու սիրենք:

Ամեն հոգու մի հաւասար սիրողը,  
Դառն աղքատ պիտի մտնի սեւ հողը.  
Զարն ու բարին ուղիղ չգիտեցողը,  
Քայ թող չմօռանայ, մէկ մէկու սիրենք:

Մի ժամանակ որ գործում էի զօր գիշեր,  
Ունէի հազարներով կտրիչ ընկերներ.  
Հիմա որ անգործ եմ, հանէ մէկին բեր  
Քայ Սմբատիս գիտնայ, մէկ մէկու սիրենք:



## ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐՍ

Հայրենիկից նամակներն ինձ,  
 Լաց ու աղաղակ են տալիս.  
 Քայց իմ ծածուկ վէրքերս ինձ,  
 Տարբեր նպատակ են տալիս:

Ազգիս կարօտութիւններն ինձ,  
 Ճնշումով դրութիւններն ինձ,  
 Խնդիրների գոյները ինձ,  
 Ինձ հետ արշաւանք են տալիս:

Միակ եղբորս սէրն ինձ,  
 Իւր աննման պարտկերն ինձ,  
 Ոհ տարաբախթ օրերն ինձ,  
 Հազար մի վտանգ են տալիս:

Բախթիս հետ ձախորթ օրերս ինձ,  
 Ճնշում են ականատես ինձ,  
 Պաղափարիս, Սմբատիս ինձ,  
 Վնասած մահ բաղձանք են տալիս:

## Ի ԾՆՆԴԷ ՄԻՆՁԵՒ ՄԱՀ

Ի ծննդէ մինչեւ ի մահ, դառնութեան մէջ ենք երկար  
 Ոչ ոք գոնէ իւր վիճակին ունի գանգատ մի պատճառ,  
 Ունայն աշխարհում չկայ կեանք ստիպված որոնում ենք  
 Չեղած բան մը չի գտնվի, նոյնիսկ փնտռենք դարէ դար:



Ամեն մի անձ իւր գործերը իրաւ արդար է խորհում.  
 Ինքն իրեն անմահ կարծելով միւսի տեղն է փորում.  
 Հարուստ ախփատ նախանձվելով մէկը միւսի միջոցին  
 Բանտերն են խիստ ամրացնում մէկը միւսի համար:

Ում որ ճիշդ բաղթաւոր կարծենք, մեծ սխալմունք է յատուկ,  
 Ոմանք յաջողակ են յայտնի վետերը մեզնից ծածուկ.  
 Արարած մը դեռ չէ ծնվել, վայելող ամեն հաճոյք  
 Երբեմն ունին մէկը միւսի վերայ տարբեր գաղափար:

Բնականից արարածոց չէ վնոված երկու բան.  
 Ոչ ուղիղ արդար մը ենք տեսել ոչ էլ մեղաւոր մը հաստատ.  
 Քանի ողջ են ամենքն իրեն պահմանը կուգեն պնդել  
 Միայն մահանալուց վերջ է լինում են մի հաւասար:

Ամենքը բարի են կարծում իրենց դասակարգերին.  
 Քարոզում են յանախորդ էլ յարգել իրենց վարքերին.  
 Բոլորն արծաթի խնդիր է լեցնել իրենց պարկերին  
 Ոչ մի ազգից դեռ չէ ծնվել մի դատաւոր հաշտարար:

Վերջ ի վերջոյ որքան շահենք, դարձեալ գոհ չենք մեր շահէն.  
 Տէրութիւնները մինչեւ անգամ, նորէն անբաւական են.  
 Ոչ ոք է եկել գնացել, գոհ այս ունայն աշխարհին,  
 Մինչեւ անգամ խորհիլ պէտք չէ, պատճառներին ճիշդ հնար:

Երգիչ Սմբաթ գիտցածիդ չափ, երգով ազատ վկայէ.  
 Պարկեւտ ու վատ անունից գատ, ոչ ոք է մի բան շահ է.  
 Կայք կարողութիւնը ունայն է, ոչ ոքի է պատկանում,  
 Աշխարհը մեծ հիւրանոց է, գալում գնում ենք երկար:



## ԲԱՐԻ ԶԳԱՑՈՒՄ

Մեծ աւետիֆ երջանիկ օր կուներնամ,  
 Երբոր հայրենիֆից ստացայ նամակ.  
 Երեսէս ծաղր կուգայ, հրնվեմ կ'ուրախանամ,  
 Կը բացվի իմ տխուր սիրտս աւերակ:

Բաց անեմ ու կարդամ մանրամասը ես,  
 Պատմէ ազատութեան բարի լուրն ազգես.  
 Կորագլուխ կը լինին վէրֆերը սրտէս,  
 Պիտի բուսնի իր մէջ վարդ ու մանուշակ:

Երգիչ Սմբատիս վիճակն է դառն այսօր,  
 Դեռահաս գիս մահ իմ խնդրում կամաւոր,  
 Երբ որ նպատակիս հասայ չափաւոր,  
 Նոր կ'զգամ ողջ մնալուս ընդունակ:

## ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Ազնիւ սրտի տէր մարդկանցը,  
 Շարունակ պատիւ յարգանք կայ.  
 Պարկեւտ պահողին իւր յանձը,  
 Դարէ դար միշտ գովասանք կայ:

Երկար օղիին տարվողին,  
 Պոռնիկին սիրահարվողին,  
 Գերդաստան միտք չբերողին,  
 Հազար ու մէկ ամօթանք կայ:



Ով որ կեղծին ընկերանայ,  
 Վերջն անպատվութիւն կ'ստանայ.  
 Օրէն հազարին պատվէ նա  
 Նորէն ծաղր ու ապուծանկ կայ:

Իմ ամբողջ վերքերս իսկական,  
 Պիտի դուրս հանեմ երեւան,  
 Արդեօք ուր իմ սրտի նման,  
 Որպէս մի սիրտ աւերակ կայ:

Օտար երկրի մի անկիւնում,  
 Վարդ մուրաստան եմ որոնում,  
 Երգիչ Սմբատս իւր սրտում,  
 Մի անկատար նպատակ կայ:

## ԿԵՂԾ ԸՆԿԵՐ

Կեղծ ընկերին հանդիպողի, վերջը մուրացեան է նա.  
 Իւր ունեցած գերդաստանի դէմը պարտական է նա.  
 Պատիւ յարգանքի փոխարէն անպատվութիւն ունի միշտ,  
 Եթէ միլիօնատէր դառնա, դեռ անպարտաւան է նա:

Մարդս իւր ունեցած դիրքին ի համաձայն խօսեմ այսպէս  
 Դուն ինձ ասա ընկերներդ ես քեզ ասեմ դուն ով ես:  
 Անգգայ ընկերների հետ օրին հազարներ միսես,  
 Քեզնից բաժանվելուց կասեն, յիմարի նման է նա:

Երգիչ Սմբատս տեսնելով երջանիկ օր, նեղութիւն,  
 Բայց ընկերս չէ ունեցել ինձ օգնելու բնութիւն.  
 Ազգատ լինելուս քնած եմ, հարուստ լինելուս արթուն.  
 Սմբատին ստոյգ գիտցողը, գիտէ իրական է նա:



## ՍԻՐՈՒՀԻՍ

Մէկ սիրուիտու համար երվում վառվում եմ,  
 Յարածամ շարունակ սրտիս ներսիցը.  
 Հազար տեսակ խիստ դառն չարչարվում եմ,  
 Կարօտից իւր վարդագոյն աշտերիցը:

Ես սիրում եմ նրան իմ կեանքիցս շատ,  
 Ես կուգեմ ճնշվեմ նա լինի ազատ,  
 Ողջ աշխարհը թէ որ ինձ յանձնեն հաստատ,  
 Դարձեալ չեմ սիրէ շատ իւր աչքերիցը:

Բաղքս ինձ ատելով աշդպէս չարաչար,  
 Պիտի վառվեմ երվիմ սիրուիտուս համար.  
 Գուցէ նպատակս մնայ անկատար,  
 Կը մտնեմ գերեզման իւր վերքերիցը:

Ով որ ստեղծողին սիրել ուզենայ,  
 Կը վնոէ սիրուիտուն իւր սիրողին տայ.  
 Նա երգիչ Սմբատից պատիւ կստանայ,  
 Ուժի չափ ամեն կերպ իւր երգերիցը:



## ՆՈՐ ԱՇԽԱՐՀ

Պատիւ յարգանք չէ մնացել, ներկայ աշխարհիս մարդկանցը.  
 Կեղծութիւնով աշխատում են, մեծացնել իրենց գանձը.  
 Խօսակցութիւնները համեղ, հազարից մէկն իրաւ չէ.  
 Որը իւր օգտի համար է, որն էլ ուզում է գովել անձը:



Յաջողութիւն ունեցողի բարեկամն անպակաս է.  
 Ճամարտութիւնով ապրողի, ցաւն ու դարտն անպակաս է.  
 Եղբոր տարաբախտութիւնը անգամ եղբոր համար ցաւ է,  
 Որտին չիտէ իւր ծնողի, գաղտնիքն ու կատարածը:

Խիղն զգացում բնաւ չկայ, բոլորը միշտ խաչագող են.  
 Ոմանք դավաճան ու մատնիչ, մեծամասն հարբեցող են.  
 Ամեն կեղտոտութիւնները դուրս գալում կեղծ ուսեալ են,  
 Ինչ դատարան կուգէ լինի կաշառող է վնասածը:

Ազգեր զանազան են գոչվում, գործքերն հրեա կռապաւտ են.  
 Յայտնի պատվում են իրարու, ներքին գաղտնիքով անհաւտ են.  
 Աստուածապաւտ բնաւ չկայ, բոլորը դրամապաւտ են,  
 Հասկացած են էկ միւսի, ծածուկ դիրքն ու կատարածը:

Բանի մը կարիք ունենալուց խօսում են ինչպէս վարդապետ.  
 Գրաւելով դուրս են առնում, էլ չեն ուզում վնարել ետ.  
 Սամսար աշակերտի նման, եղել էլ լարախաղաց վարպետ,  
 Բոլորն էլ ուղղում են իրենց սխալմամբ ծռածը:

Մէկ օրէնք կայ բնականից, անխախտ պիտ դարէ դար գնայ.  
 Ով որ ում սիրում է սրտով, պիտի անվերջ սիրով մնայ.  
 Սիրոյ գոյքը մարդու սրտին, անբաժան է չի հեռանայ,  
 Ամեն մարդ էլ փնտռում է իւր, քանկագին կորցրածը:

Վերջապէս ամբողջ ազգերի, գործքերն է մէկ հաւասար.  
 Միայն մէկ ապրուստի համար, ձգտում են միշտ չարաչար,  
 Ամեն մարդ իր գործերի դէմ, ունի փաստ պատասխան պատճառ  
 Միայն երգիչ Սմբատն է որ, չի հասկանում իւր գրածը:



## ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քնիր մինչ երբ դու լաս որդեակ,  
Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:  
Իմ աչքիս լոյս դու իմ հոգեակ,  
Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:

Նայիր դու իմ չարչարանքիս,  
Չես քողնում քուն գայ իմ աչքիս.  
Քեզ մատաղ եմ Արամայիս  
Ա՛յ էրա, նաննիկ էրա դուն:

Քնիր որ քեզ պիտի սիրեմ,  
Քեզ համար սանդուխ կը գնեմ,  
Միշտ ուսումնարան կը դրկեմ,  
Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:

Երբ գրել կարդալ իմանաս.  
Տաժուէդ նամակ կ'ստանաս.  
Որտեղ լինելը կը գիտնաս,  
Ա՛յ էրա, նաննիկ էրա դուն:

Տես իւր Արաֆսին ինքներան,  
Մտաւ անկողին լուրջ բերան.  
Բալի՛կ, ինքդ էլ նրա նման,  
Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:


Խղնայ քո խեղն պապին մամին,  
Թող այդ ծերերն հանգիստ քնին.  
Որ շարունակ քեզ հոգ տանին  
Ա՛յ էրա, նաննիկ էրա դուն:

Քնիր որ դու շուտ մեծանաս,  
 Մի քաջ երիտասարդ դառնաս,  
 Ազգիդ օգնել կարողանաս,  
 Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:

Որ տասերկու ամեա եղար,  
 Տաժուդ կ'առնի քեզ մի քնար.  
 Իւր երգերն ածելու համար,  
 Ա՛յ էրա, նաննիկ էրա դուն:

Տաժուդ ու հայրիկդ օտար,  
 Այսօր նրանցից նամակ կար.  
 Միջոց տուր կարդալու համար  
 Ա՛յ էրա, նաննի՛կ էրա դուն:

Սմբատ տաժուիդ իսկական,  
 Սիրոյ բարեւ կայ քեզ լալկան.  
 Թոյլ տուր պատասխանեմ նրան,  
 Ա՛յ էրա, նաննիկ էրա դուն:



## ԴԱՌՆ ՎԻՃԱԿԻՍ


Տէս ինչ կեանքերի ենթարկուայ, մէկ քեզանով դառն վիճակ.  
 Անեղ կրակներով վառվայ, մէկ քեզանով դառն վիճակ.  
 Քո ինձ տուածդ վերքերն, անհատ ու պատմական են,  
 Հագար տեսակով չարչարվայ, մէկ քեզանով դառն վիճակ:

Շատերի օրն անց է կենում հրնումով անտարակոյս.  
 Ոմանց սրտի մէջը կարծես վարդ է բացվել նորաբոյս.  
 Ոմանք յաջողութիւն ունին ոմանք էլ անվախճան յոյս  
 Բայց ես ամեն ինչ է գրկվայ, մէկ քեզանով դառն վիճակ:



Քանի որ ինձ չէիր ատել, պարկեշտ բնութիւն ունէի.  
Մանկութիւնից կատարեալ էի, վարքից նորութիւն ունէի,  
Հայր ու մայր ազնիւ գերդաստան, փոքր ապրուստ տուն ունէի  
Դարձաւ բոլորն աւերակ, մէկ քեզանով դառն վիճակ:

Երգիչ Սմբատիս սրտի մէջ, հազար վերքեր ցանեցիր.  
Վերջ ի վերջոյ ամեն ինչս առար ապականեցիր.  
Դառնութիւններդ իմ սրտի վերայ, ամուր կարեցիր.  
Մանվեց գլխիս ձախ նախարակ, մէկ քեզանով դառն վիճակ:



## ՊՕՌԱՏԱԽՕՍԸ

Գօռօզը իւր նախանձը սրտի մէջը միշտ,  
Լինում է կեղծ կասկածանկներ շարունակ.  
Խօսվացփութեան ձեւկանի հերթը նիշտ,  
Կը յայտարարէ բամբասանքներ շարունակ:

Այս դարիս մէջ խօսողն ստոյգ ու արդար,  
Զի լինի կեղծերին բնիկ սիրահար.  
Իւր օրերը կ'անցնին, ձախորդ, դառն, երկար  
Ունի ապուծանկներ տարբեր շարունակ:

Այսպիսով կ'անցնի ձախորդ իւր օրը,  
Հինի վերայ գալով հետ գետն նորը.  
Գոռոզ քաղցրախօս նիշտ կեղծաւորը,  
Ունի խարդախ նպատակներ շարունատ:

Երգիչ Սմբատիս ասած երգերից,  
Եղեք տեղեակ նրա ամբողջ վերքերից,  
Իւր ունեցած անգոյթ խարդախ ընկերից,  
Դեռ կրում է ամօթանքներ շարունակ:



## ՍՈՒՐԱՆԴԱԿ

Ամեն ասածս ինձ համար չէ,  
կարդող չգիտցողին ասա.  
Երգերս հրովարդակ է,  
Լսող չիմացողին ասա:

Տեսար որ մարդ մը ստացաւ վերք,  
Նայէ ինչն է բուժելու պէտք.  
Գաղտնի մի պահէ դուն երբեք,  
Դեռ չհանդիպողին ասա:

Պատիւդ պահողին յարգանք,  
Քեզ սիրողին ուզէ ողջ կեանք.  
Գրաւելով մխիթարանք,  
Կսկիծով լացողին ասա:

Տեսար մէկի գերութիւնը,  
Ախփատ ու խեղճ դրութիւնը,  
Հարցուր պատահողութիւնը,  
Դեռ չպատահողին ասա:

Թէ եղել ես օտարութիւն,  
Տեսար հրչանք կամ նեղութիւն,  
Ամբողջ կեանքից ուղղութիւն  
Դեռ չգնացողին ասա:

Ուր որ լինի տեսար հարբած,  
Գիտցիր որ կ'ըլլայ անպատված.  
Առ իւր գերդաստանիցը հարց,  
Գերդաստան շահողին ասա:



Ում որ լինի լաւ գաղափար,  
Վատ ընկերով կ'ըլլայ վատդար.  
Թէ ունիս խիղճ հոգի արդար,  
Դեռ չընկերացողին ասա:

Ով որ կ'ուզէ պատվի յարամբ,  
Հանապարհ գտնելու համար,  
Սմբատիցը երգարան առ,  
Կարդայ ընկերներուդ ասա:

Աւա՞ղ ինչե՞ր չեկան գլխիս,  
Հոգ չեր դառն աշխատանքիս.  
Դժվար է գտնել հին վարքս,  
Հայրենիքիս հողին ասա:

Օտարութիւնս շատ երկար,  
Աշխատում եմ միշտ չարաչար,  
Ինձնից ուսուցիչիս լուր տար,  
Բարեւ կարդացողին ասա:

Երգս կարդացող քաջ գիտուն,  
Խնդրեմ քեզնից ներողութիւն,  
Ողջ հայրենիքիս տնէ տուն,  
Բարեւ ինձ սիրողին ասա:

Եթէ կ'ուզես գիտնալ կեանքէս,  
Առաջ մի լաւ տղայ էի ես.  
Տաւառ-Ղալաղու իմ գիւղէս,  
Ինձ հետ եմ ծացողին ասա:

Իմ ամբողջ գուտ արամունքս,  
 Մարդկանց հետ իմ վարմունքս,  
 Ումով եղաւ տարբերմունքս,  
 Աւետիկ Այվագովին ասա:

Ոչ հպարտ եմ ոչ բարբարոս,  
 Հարցուր վարքն Յովհաննէս հօրս.  
 Նոյնպէս ազնիւ Շողո մօրս,  
 Ողջ բայանտուր գիւղին ասա:

Ո՛վ մարդ երգերէս խրատ առ,  
 Կ'ըլլաս գիտուն գեղամեծար.  
 Թէ որ եղար ինձ պէս վատդար,  
 Ամօթ բանաստեղծին ասա:

Այս առակախօս երգերէս,  
 Եղեմ տեղեակ իմ դէպքերես.  
 Ես որ տեսա չեմ ուզէ Ձեզ,  
 Յոյսը զարգացողին ասա:

Մարդ որ սիրտը մէկ ուխտ դնէ,  
 Մարդկանց ինչ որ ուզէ կ'անէ.  
 Ասէմ երգիչը խնդրում է,  
 Գէթ չհամոզվողին ասա:

Թէ որ ինձ չպիտի լսես,  
 Ինքդ էլ պիտի տարբեր ապրես.  
 Վերջդ ինչ տեսակ կը լինես,  
 Ինձ առաջ գովողին ասա:



Արաֆսիս, Եփրակսիս,  
Արամայիսիս ու հարսիս,  
Ինձնից ազգես ծնողներիս,  
Բարեւ տուր բոլորին ասա:

Երգիչ Սմբատի շարունակ,  
Սրտումըս կայ մի մեծ փափաֆ.  
Ունի սիրոյ բարեւ յարգանք  
Տա՛ր իւր Վարդանուշին ասա:

## ԳՈՎԱՍԱՆՔ

Աչքերդ թուխ, ունկերդ կամար, աղջիկ դէպ ինձ արի,  
Այտերդ վարդի թերին հարմար, աղջիկ դէպ ինձ արի.  
Այս ու այն կողմը նայելուց մարդկանց վերքեր ես տալիս,  
Սիրում եմ քեզ կեանքիս հաւասար, աղջիկ դէպ ինձ արի:

Կը զրկես թէ գերդաստանից, թէ խղճալի իմ կեանքից.  
Մտիր անգամ մը վիճակիս մէջ, եղիր տեղեակ իմ անձից,  
Կուգեմ մէկ մէկ համբոյր առնել այդ քո երկու աչքերից,  
Լեզուդ փաղցր սոխակից նարտար աղջիկ դէպ ինձ արի:

Գոյնդ առել ես վարդերից, արեւ ու լուսնիեակէս.  
Յանկարծ քո ինձ հանդիպելուդ, առ խնդիրս Սմբատէս.  
Բաւական է դուն անմահ, պալդուխտիս գուր չարչարես  
Ով լուսափայլ դուն գեղամեծար աղջիկ դէպ ինձ արի:




## ՍԿԶԲՈՒՆՔ

Կեանքս գրաւ լինի, ազնիւ ընկերիս,  
Որ հոգիս պահանջէ, խնայել չիտեմ.  
Մեծ գումարի համար օգուտ իմ անձիս  
Բերելու, լեզուրս սուտ, վկայել չիտեմ:

Ծնվել եմ աշխարհ հոգսերիս անհամար.  
Վէրքերուս հետ բաժին հրնվելուս անհամար.  
Քաղցած ծնողներիս երեխիս համար,  
Ես ուրացողութիւն, կատարեալ չիտեմ:

Գործս որ անյաջող լինի իսկական,  
Լինեմ դառն ախփատ դառն մուրացկան  
Թէ ունենամ հարուստ հազար ազգական,  
Նրանց յոյսով գերդաստան պահել չիտեմ:

Երգիչ Սմբատն ունի այդպէս բնութիւն,  
Գնող յանախորդ չեմ ոչ մի չարութիւն.  
Երկնից գայ քննիչ ու արդարութիւն  
Ոչ մէկի պատիւին կեղծ նայիլ չիտեմ:



## Դ Ի Վ Ա Ն Ի


Զկայ աշխարհի մէջ քեզնից մէկ դուրական սիրական,  
Գեղեցիկներին մեծ իշխան, դուռն իսկական սիրական.  
Զայնդ քաղցր է սոխակի, վարդ մանիշակ նման ես.  
Զկայ նմանդ Յունաստան, Ռուսաստան սիրական:



Ինչպէս պարտեզի մէջ վարդը, դու ես զարթը աշխարհի.  
Աչքերդ կեանք կուտան մարդու, ունկերդ հրեանք անհարի  
վարդ այտերդ միշտ զրկել են վարձէն, կեանքէն հազարի  
Արդեօք ո՞ւր կայ քեզի նման, ազնվական սիրական:

Թափառել եմ աշխարհի մէջ, տեսել ազգեր որքան կան,  
Հարցանելով վրաստան ու Պարսկաստան եւ Իտալեան.  
Մագետօնեայ եւ Բուլղարեայ, Սպանիա եւ Գաղիեայ  
Զկայ նմանդ Ամերիկայ, ոչ Գերմանեայ սիրական:

Դեռ չէ եղել ոչ մի տեսնող, խօսող, լսող, լաւ քեզէն.  
Աշխարհի մէջ դեռ չէ եղել մի մայր ծնող, լաւ քեզէն.  
Ոչ եղել է քաղցր խօսող, երգող, հրմովող, լաւ քեզէն.  
Սմբատս քեզ սիրող մշտական, դուն աննման սիրական:




## ՍԻՐՈՒՀԻՍ ՄԻԱՅՆ

Քեզ եմ սիրում քեզ միայն մէկ,  
Իմ քաղցր սիրական ընկեր.  
Մտփիցս չես ելնում երբեք,  
Մի վայրկեան պատվական ընկեր:

Դու ես ինձի յարգանք տվող,  
Տխուր սրտիս հրջանք բերող.  
Լեզուս քարտար պարզեցնող  
Ժամ առ ժամ օրական ընկեր:

Կեանք պարգեւող գիտութիւնդ,  
Ազնիւ խորհամտութիւնդ,  
Վարդից պէս դէմքդ ու գոյնդ,  
Քաղցրախօս տուրեկան ընկեր:

Խեղճ Սմբատս մտած պայման,  
Քեզ տեսութեան լինի արժան,  
Քեզ հետ խօսէի մի վայրկեան  
Նոր մտնեմ գերեզման ընկեր:



## ՅԱՐԳԱՆՔՍ

Իմ հասցէիս մի բառ յարգանս խօսողին,  
Պիտի գովեմ նրան քաղցր երգերով.  
Խնոյճներու կեանքիս մաղթանք բերողին,  
Պիտի սիրեմ նրան իւր ընկերներով:

Ուղղութեանս վերայ ուրախացողին,  
Տրտմունեանս ինձի մխիթարողին,  
Պատահելուց խնդիրս կատարողին,  
Մինչեւ մահ իւր հետ կը վարվեմ սիրով:

Սմբատիս յարգողի հետ ունիմ մեծ կապ,  
Յարգեմ կեանքիցս շատ մինչեւ հոգւոյս չափ.  
Իւր պատմառով կուգեմ կրել մեծ տազնապ,  
Զոհ եմ նրան իմ ողջ կարողութիւնով:



## Դ Ա Ս Տ Ա Ն

Պարկեւտ մարդու բերանիցը,  
 վատ լուր հազիւ հազ դուրս կուգայ.  
 Մի խօսք կեղծ կարավանիցը,  
 Մաքուր հազիւ հազ դուրս կուգայ:

Գարնանամուտ հարափ հող մը,  
 Բերում է մեծ անձրեւ ցող մը.  
 Գետերի նիւղ ներքի կողմը,  
 Պարզ ջուր հազիւ հազ դուրս կուգայ:

Երկար գատվողն հայրենիքից,  
 Դարձեալ սիրտն է նրա հեքից.  
 Մի շէնք նուրբ վարպետի ձեռնից,  
 Անտուր հազիւ հազ դուրս կուգայ:

Գեղեցիկների այտերը,  
 Նման վարդի, ծաղիկները,  
 Սիրող դեռահասի սէրը.  
 Ան հուր հազիւ հազ դուրս կուգայ:

Բարիք չկամեցող մարդուն,  
 Նրան կայ իժի բնութիւն.  
 Կեղծութիւնից զոգ գիտութիւն.  
 Փորց տուր հազիւ հազ դուրս կուգայ:

Կատարողը չար նպատակ,  
 Մի վայրկեան, չի անէ կատակ.  
 Նրա գրպանները դատարկ  
 Ան սուր հազիւ հազ դուրս կուգայ:

Դաւանանի թռնրի տակից,  
Արեան հոտ է գալում հացից,  
Առանցի թռչն իւր ջաղացից,  
Ալիւր հազիւ հազ դուրս կուգայ:

Մարդասպան կեղծ դավանանին,  
Պէտք չէ սիրել նրան կրկին.  
Հոգուց, խղնից մէջ իւր սրտին  
Նշոյլ հազիւ հազ դուրս կուգայ:

Անգգա կեղծ հարուստներից,  
Մէկը չեն խեղնին ցաւակից,  
Կոյրին ողորութիւն ձեռնից,  
Մի բուռ հազիւ հազ դուրս կուգայ:

Անկիրթ վատդարն իւր արարից,  
Բացակայե պատվոյ շարքից,  
Նրա համար ողջ աշխարհից,  
Մէկ հիւր հազիւ հազ դուրս կուգայ:

Օգուտ չի գա այն ծոյլ եզից,  
Բաց ուտում է մաքուր տեզից,  
Ծոյլ այգեպանի պարտէզից,  
Մի նուռ հազիւ հազ դուրս կուգայ:

Թէ հարցանես գենեմօլին,  
Կեանքից շատ սիրում է օղին.  
Ցանկութեան նամբուն տարվողին  
Մայր, քոյր հազիւ հազ դուրս կուգայ:



Զգուշացիր, գլուխից կախ  
 Մարդի գործն է անվերջ խարդախ.  
 Իրմից որ բերին մի չանաղ,  
 Ապուր հազիւ հազ դուրս կուգայ:

Խոզի ամենայ արաբը,  
 Կը փնտռէ ժելսերի տակը.  
 Բայց փիղերից ծնված ձագը  
 Պուճուր հազիւ հազ դուրս կուգայ:

Յիմար ծնվողը իւր մօրից,  
 Նա դուրս չի ելնի ախոռից.  
 Նմանապէս սիջկի լօռից,  
 Եղ, ժուր հազիւ հազ դուրս կուգայ:

Տուն պահող առիւծ գազանին,  
 Տան տէրերն յոյսով կը բնեն,  
 Որովհետեւ նրա բերնեն,  
 Սուտ լուր հազիւ հազ դուրս կուգայ:

Աղվեսն մտած մէջ արկղի,  
 Քաջ է դառնում դէմը փիղի.  
 Հացը միայն առանց իւղի,  
 Հմուռ հազիւ հազ դուրս կուգայ:

Անց կենալու է հեռեւից,  
 Վտանգաւոր անհիմն պատից.  
 Անտուր կռախտ փթած փայտից,  
 Սանդուր հազիւ հազ դուրս կուգայ:

Առակախօս ձանձախներից,  
 Մարդկութիւն դուրս կուգայ շատ քիչ.  
 Սմբատն էլ որ դառնա երգիչ  
 Մի ծուռ հազիւ հազ դուրս կուգայ:



## ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Մարդս իր տան մէջ թէ ընկերների մօտ,  
Որ պատիւ չունենայ մահանայ լաւ է.  
Իւր ծնողից իրան մասնաւոր աղօթք,  
Որտին որ շարունակ իմանայ, լաւ է:

Հարկ չէ որդուն իւր ծնողին անարգէ.  
Պարտականութիւն է, պատմէ ու յարգէ.  
Թէ պանդուխտ է օգնէ, նամակ ուղարկէ,  
Այդպէս տղան առողջ մեծանայ, լաւ է:

Ով որ ունի մի գեղեցիկ սիրական,  
Որ լինի անմման ու շատ տյուրկան.  
Ունեցողը պատվով ազնիւ կինն իրաւ,  
Այն սիրականիցը հեռանայ, լաւ է:

Հասկանանք որ վարդը նման չէ փուշին.  
Գիտունն էլ ընկեր չէ խենդին ապուշին.  
Երգիչ Սմբատն էլ իւր կին վարդանուշին  
Թէ մօռանայ հաստատ կուրանայ, լաւ է:



## Ն Ա Խ Ա Ն Ձ Ո Տ


Մեր սրտին տիրող նախանձը ազգիս եղեռն է գործել,  
Այս պատճառով անտանելի տագնապի ենք մատնվել.  
Մեր որբերի աղերսանքը տարածվել է ամեն տեղ,  
Մեր քաջերի մեծամասը մեր ձեռքով նահատակվել:



Մեր հայրական օջախները այժմ աւերակ դառած,  
 Հայ կոյսերը անգոյթ տանկի ձեռքը գերի են ընկած,  
 Խեղճ ծերուկներն ֆաղցած տկլոր անկիւններում կուշ եկած,  
 Մեր անհամաձայնութիւնից, տանջանքի ենք մատնվել:

Լայն աշխարհում մեր օրերը տրտմութեամբ են անցկացել,  
 Փոխան լաւագոյն դառնալու հիմա խիստ է վատացել,  
 Հայ երեխան ուսման փոխան քեցնամու անըն է ծավալել  
 Ոչ մի ծնող ճիշդ եռանդով, խնդումով չէ մահացել:

Սմբատ գրէ գիտցածիդ չափ, ինչ որ ուղիղ արդար է,  
 Որովհետեւ քո էլ ամբողջ նպատակդ անկատար է,  
 Ինչ ազգի մէջ որ վիթքում են դավաճանները հազար,  
 Անտեղի է իւր ճնշումը մեծ ազգերին գանգատել:



## Ե Ր Ե Ի Ո Յ Թ

Մարդում խոսվացփութեան ձեւականիցը,  
 Կը հասկացվի նորա գիտութիւնը ճիշտ.  
 Մարդում ժուր գալուցն ու նակատեցը  
 Կը նշմարվի նորա ֆաջութիւնը ճիշտ:

Մարդ որ զրկվի իւր ունեցածիցը,  
 Ուզէ մութը պահել լոյս աշխարհիցը.  
 Բայց իւր դէմքի փոփոխակի գոյնիցը  
 Մարդիկ կը հասկանան դրութիւնը ճիշտ:

Արեգակը ողջ աշխարհին կը ցայթփէ,  
Տէրը կուտայ մարդուս ինչ որ է պէտք է.  
Մարդ որ իւր խօսածը նորից կրկնէ.  
Մարդիկ կը հասկանան բնութիւնը նիւտ:

Ողջ տկարը չի փրկվի վերքերէն,  
Մինչեւի մահ չի ազատվի պէտքերէն.  
Երգիչ Սմբատի իւր ասած երգերէն  
Մարդիկ կը հասկանան ինչ վերք ունի նիւտ:

## ՀԱՅՐԵՆԻՔ ԻՄ

Հայրենիք իմ հոգսերս քեզ,  
Ողբալով իմաց պիտի տամ.  
Նոր ստացած վերքերս քեզ.  
Երգելով իմաց պիտի տամ:

Խիստ տկարացել եմ ձրի  
Օտար հացից ջրից լեղի.  
Իմ մայր հայրենիք քեզ մեղրի  
Խօսքերով յիմաց պիտի տամ:

Այլոց լեզուների տակը չար,  
Դառած հրամանակատար,  
Հայրենիք գիտնալուդ համար.  
Խնդրելով յիմաց պիտի տամ:

Սիրելով ամեն բնութեան,  
Եղել եմ տուն համբերութեան.  
Սմբատիս կեանքիցը միայն  
Թերթերով յիմաց պիտի տամ:



## ՄԱՐԴՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆԸ

Մարդուս կատարելութիւնն աշխարհի մէջ,  
Շատեր կ'ոգվեցնէ սիրականի պէս.  
Ինչպէս մանուկների գաղափարի մէջ,  
Ուսման լուր կը բերէ ֆերեկանի պէս:

Կատարեալը որ գաղթվի իւր երկրեն,  
Օտար երկիր դարձեալ պիտի նշմարեն.  
Կատարեալ մարդ նորից կը սիրեն  
Ինչպէս իշխանաւոր ազգահանի պէս:

Անկիրթ մարդը թեկուզ ուր էր որ լինի,  
Որքան որ զարդարվի, զգեստաւորվի.  
Նորեն դարձեալ ձեւկանից իւր դէմքի,  
Մարդիկ կ'որոշեն, անպիտանի պէս:

Երգիչ Սմբատ դու գաղտնիք մի բանայ,  
Որքան կուգէ դէմքդ հրնվի ուրախանայ.  
Մարդիկ գիտեն քեզ այնպէս մի կրակ կայ,  
Որն է սրտիդ մէջը վառարանի պէս:




## ՍԻՐՈՅ ԿՐԱԿԻՆ

Սիրոյ կրակէն տարվողը բան չի մտածէ բնաւ.  
Բոլոր գործը թերի մնայ, բան չի մտածէ բնաւ.  
Ընկեր է պէտք, հաւատարիմ դրութիւնից դուրս բերէ,  
Ամեն կերպով տարակուսված, բան չի մտածէ բնաւ:



Միայն կուգէ զատ ընկերներ, խրախշանքի կեանքի մէջ.  
 Կուգէ մտնել ընկերներու, կարավանի կեանքի մէջ.  
 Պէտք է զգայ մտնելու խեղճ գերդաստանի կեանքի մէջ,  
 Գիտնամուրթեան համոզված, բան չի մտածէ բնաւ:

Սմբատ երգով քարոզում ես, ինքդ քեզ հեշ չես նայում.  
 Երգիդ իմաստի համաձայն, անձդ գուդ չես պաշտպանում.  
 Երգդ ընթերցողներին այսպէս նիւթ ես վկայում,  
 Բաջ գիտցիր որ քեզ էլ կ'ասեն, բան չի մտածէ բնաւ:



## ԵՐԳ ԽՐԱՏԱԿԱՆ

Ո՛վ մարդ, որ աշխարհի մէջ գիտութիւն կայ,  
 Տըգիտութեան հետ դու ի՞նչ գործ ունիս.  
 Տե՛ս, մարդկանց անիւ վեհ բնութիւն կայ,  
 Մէկ տուն յիմարութեան հետ ի՞նչ գործ ունիս:

Բացի քեզնից քեզ ոչ ոք չի պաշտպանէ,  
 Նեղութեանդ մէջ մարդ չի հոգ տանէ.  
 Մարդկանց մարդ անող աշխատութիւնն է,  
 Ապա դուն ծուլութեան հետ ի՞նչ գործ ունիս:

Զանգ դիր հակատիդ չքերես քուք մուր,  
 Ազնիւների նման էրա առ ու տուր,  
 Դուն էլ նրանց պէս առ, անտրտունջ ետ տուր,  
 Զար ուրացողութեան հետ ի՞նչ գործ ունիս:

Աշխատիր լինելու իշխան անվանի,  
 Թէ որ կուգես մարդիկ տան քեզ երանի.  
 Պէտք է լսես խրատին, երգիչ Սմբատի  
 Նորա ստորութեան հետ ի՞նչ գործ ունիս:



## Ո Ր Բ

Որբի երեսը տեսնելուց,  
Իսկոյն խիղնս ինձ տանջում է.  
Տխուր դէմքը ինձ նայելուց  
Ուրախ սիրտս խանգարում է:

Որբը չունի երամապետ,  
Գաղափար տվող վարպետ.  
Վիճաբանելուց մեկի հետ.  
Ճիշտն ինքն է նորից լռում է:

Որբը որ ի վէճ ունենայ,  
Դատի վնդի ներկայանայ,  
Որքան որ արդար լինի նա,  
Դարձեալ նա մեղաւորնում է:

Նման բողոքի հայերի,  
Յայտնի է ամեն կայսերի,  
Մօտ չորս միլիօն որբերի,  
Խնդիրն օգնութիւն գոռում է:

Որբի գեղեցիկ ընտիրը,  
Դարձեալ նրան մարդ չի սիրէ.  
Թէ մեկեն յայտնէ վէրքերը,  
Փոխան օգնել, ծաղրանում է:

Մօտ ութ հարիւր ամ անցած,  
Հայ ազգը բողոք է վտած.  
Մինչ այս վայրկեանիս է հասած,  
Անհետեւանք ետանում է:

Երգիչ Սմբատս ինձանից,  
 Զգվել եմ պանդխտութիւնից,  
 Խեղճ որբերու դրութիւնից,  
 Զեռֆս ինձ մահ պատնառում է:

— † —

### ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Ով Տէր իմ Տէր մինչ ե՞րբ մնանք  
 Օտարական երկրէ երկիր.  
 Բաւական չե՞ այսպէս ժուր գանք  
 Թափառական երկրէ երկիր:

Թողած հայրենեաց երկիրը,  
 Ընկած աշխարհի խորքերը,  
 Միշտ արտասված մեր աչքերը.  
 Անգերդաստան երկրէ երկիր:

Բնականից մեր մեծերէն,  
 Հաւասար վերքերի տերէն.  
 Շատերն անտեղի մտելէն,  
 Յուրտ գերեզման երկրէ երկիր:

Հայաստան որդիքդ գերի,  
 Մաս մաս ընկած մէջ ազգերի.  
 Նման յաղախորդ վերքերի,  
 Վաճառական երկրէ երկիր:

Այս իմ դառն անգոյթ բաղթիս,  
 Ամեն գրկանգ տեսել եմ ես,  
 Զկայ երգիչ Սմբատիս պէս,  
 Հալածական երկրէ երկիր:



## ՊԱՐԶՈՒԱԾ ԳԱՂՏՆԻՔ

Անմիտը զգեստ հագնելուց,  
 Իրեն ուսեալ մարդ է կարծում.  
 Երբեմն փուշը ծաղկելուց  
 Նա էլ իրեն վարդ է կարծում:

Գինեմօլ միշտ հարփեցողը,  
 Ցանկութեան որթն ու գողը,  
 Օրին հազարին խափողը,  
 Խոնարհին կախարդ է կարծում:

Խնջոյքից անտեղեակ մարդուն,  
 Հրաւիրելուց պատվի տուն,  
 Իւր ազատ օրվա հրնվելուն,  
 Բանտարկված թագարտ է կարծում:

Մուկը որ մտնում է բունը,  
 Փոփոխվում է բնութիւնը.  
 Թողած կատվի ֆաջութիւնը,  
 Իրան ֆաջ հերօս է կարծում:

Ազնիսի ցեղ գիտուն մարդին,  
 Կը լինի պարկեշտ բնութիւն.  
 Երկչոտ մը հետը խօսալուն  
 Նրան մեծ հպարտ է կարծում:

Կեղտոտ անաշխատ յիմարը,  
 Զիտէ անվան ճիշտ համարը,  
 Ուրացողը մարդկանց հազարը,  
 Դարձեալ ինքն անպարտ է կարծում:

Ճաննը երեխայի աչքին  
 Կ'երեւայ գեղեցիկ անգին.  
 Մեխֆեր գործողը ահագին.  
 Իրեն միշտ արդար է կարծում:

Խենթերիցն օգուտ մարդու,  
 Ձի գայ պէտք չէ դնելու յոյս.  
 Է՛հն էլ առվակը տեսնելու,  
 Արագս ու Տղմարտ է կարծում:

Արդարութիւն կատարողին,  
 Սրբութեամբ օրէնք պահողին,  
 Հարցանես վատտար հարփողին,  
 Չարութեան մակարդ է կարծում:

Չգիտցող, արքայութիւնը,  
 Գործն է կողմնապահութիւնը.  
 Մարդկանց նիշտ վկայութիւնը,  
 Զուր ու զրպարտանք է կարծում:

Մեծախօս անպարդաւանը,  
 Չար լրտես ինքնահաւանը,  
 Իւր անպատիւ վարժութեանը,  
 Աշխարհի մէջ գարթ է կարծում:

Վերջապէս փորցելու համար,  
 Ընկերացիր մէկին, վատդար.  
 Պատվէ նրան օրին հազար,  
 Նա քեզ իրեն պարտ է կարծում:

Երգիչ Սմբատ դու սկսէ,  
 Քեզի նիշտ յարգողին լսէ.  
 Ով որ հասցէիդ լաւ կ'ասէ  
 Իրեն, քեզ եղբայր է կարծում:



## ՄԵԾ ՅՈՅՍ

Այս վայրկեանիս խիստ նեղութեան մէջ եմ ես.

Երբեմն կը լինիս յաջողակ սիրտս.

Հագար ու մէկ կարօտութեան մէջ եմ ես.

Երբեմն կ'ուրախանաս շարունակ սիրտս:

Երբեմն լինում ես կարծես բացված վարդ.

Երբեմն ամեն կերպ լինում ես գվարթ

Երբեմն կը լինիս պատվոյ արժան մարդ,

Երբեմն կը խօսիս համարձակ սիրտս:

Երբեմն տխուր ես, երբեմն ուրախ,

Երբեմն գիտուն ես, երբեմն դանդաղ.

Երբեմն որ գործդ լինի լաւ յանախ

Երբեմն աշխարհից առ փափագ սիրտս:

Երբեմն համբերէ սիրտ իմ մի ողբա՛.

Երբեմն տար սիրով բաղդից ինչ որ գա,

Երբեմն աշխարհը քեզի չի մնա

Երբեմն չես լինի՛ աւերակ սիրտս:

Սմբատիս համար մի մեծ աւետիկ,

Քեզմով ես կ'ստանամ, նոր կեանք երջանիկ.

Երբեմն որ տեսայ ազգ ու հայրենիք,


Երբեմն կը խօսիս միշտ կատակ սիրտս:

## ԾՈՅԼ ԳԻՒՂԱՑԻՆ

Դատարկաբանութիւնը, ով մարդ քեզ համար,  
վայրկեանից առ վայրկեան փորձանք կը բերէ.  
Թղթին ու տամաին տարվելդ երկար  
Հասկացիր որ քեզ ամօթանք կը բերէ:

Գփելով աջ ու ձախ հրում ես տամեն.  
Ամբողջ օրը տեղեակ չես լինում գոմեն.  
Եզներդ օրից օր նիհարանում են,  
վաղը ցանք, քեզ ամօթանք կը բերէ:

Արտերդ որ ցանես եզներով նիհար,  
Ցորնի տեղ կը բուսնի աւելուկ ու կառ.  
Դուն էլ կեղնիս երգիչ Սմբատիս յարմար  
Սխալմունքդ քեզ ամօթանք կը բերէ:



## ԱՐԴԵՕՔ ՅԻՇՈՒՄ ԵՍ

Արդեօք յիշում ե՞ս մեր անցեալ քանզ օրերը անման,  
Անում էր մեր անկեղծ սէրը, ամեն օր ամեն վայրկեան.  
Մեծ զարմանք է կամ քէ հրաշք, քո ինձ այդպէս ատելդ,  
Փոխան սէրը բազմանալու, այսօր վտած է վախճան:

Անգոյք բախքը մարդկանց գլխին, տարբեր դերեր է խաղում,  
Մէկին ատում է շարունակ միւսին բախտավորում,  
Մէկ էլ փառքը չգիտցողին, տաք շամբուրով է դաղում  
Մէկն էլ անհար տկարութեամբ, զրկում է մահ գերեզման:



Երգս կարդացողը կ'ըլլայ ծանօթ իմ կենսագրիս.  
 Ոմանք անբախք պիտի կարծեն, ոմանք խիստ ապերախք գիս,  
 Այսուհետեւ բարի կամ չար առարկելն իմ հասցէիս  
 Անտեղի է, որովհետեւ կատարված է ամեն բան:

Ամեն մի երգիչ, բանաստեղծ, գրում է իւր գիտցածը,  
 Վնուած յայտարարում է իւր գլխին ամբողջ գալածը.  
 Այդպէսով գգում է հանգչած իւր սրտի խիստ վառածը  
 Կարծես գտաւ նպատակին հասնելու ճիշդ պարագան:

Երգիչ Սմբատս էլ մի մարդ էի գերդաստանով զարգացած  
 Հիմայ նման եմ ծեր կաղնու տերեւներից մերկացած.  
 Մի անգգայ խլեց ձեռքէս, ում որ սիրում էի սրտանց  
 Շատերն էլ նոյն օրինակով կազմին ինձ հետ կարավան:

— + —

## Գ Ո Վ Ե Ս Տ

Ո՛վ հրեշտակաձեւ աղեղնակ ունիք,  
 Մի վայրկեան ինձ հետ խօսալու, նա ասա  
 Դու, վարդագոյն երես, գեղեցիկ աչքեր,  
 Խնդրում եմ մի համբոյր տալու, հա ասա:

Դէմքդ կարծես վարդավառի արեգակ.  
 Լեզվիդ բարբառելը նմանի սոխակ,  
 Որքան որ անպատվես կ'երեսի կատակ,  
 Մի ժամ ինձ հետ ուրախնալու հա ասա:

Գեղեցկութիւնը քո վերա հատած է,  
 Սէրդ վրանի պէս գլխուս պատած է.  
 Քեզնով խենթ եմ, դրութեանս մտած է  
 Սմբատիս հետ միանալու հա՛ ասա:


## ԻՆՉ Է ՊԷՏՔ

Ով մա՛րդ, այդ քո նարտար խօսելուդ համար,  
Քեզ մի ազնիւ ու վեհ, բնութիւն է պէտք,  
Ոսկի ժամացոյցիդ, հագուստիդ յարմար,  
Քեզ նժոյգ ձի, մեծ գումար փող տուն է պէտք:

Թէ այդ բոլորն ունես, ինքդ իսկական,  
Թէ որ աւարտել ես մեծ ուսումնարան,  
Քեզ կը կարծեն մի մեծ գաղափարական.  
Արդէն քեզի մեծ իշխանութիւն է պէտք:

Մէկ օր մարդիկ կ'ընտրեն քեզի դատաւոր,  
Միշտ գանգատի կուգան, քեզ մօտ բիրաւոր.  
Քննելուց որն է նրանցից մեղաւոր,  
Քեզ խեղճ, հոգի եւ արդարութիւն է պէտք:

Երգիչ Սմբատ, լուսաբանիւր պարգօրէն,  
Եղբայրդ ունի գանգատ ինձ վերա նորէն.  
Արժան չէ տարբերես ինձ քո եղբօրէն,  
Քեզի այսչադ հաւասարութիւն է պէտք:



## ԱՆՄԻՏ ԳՈՌՈՋ


Անմիտ գօռօզ, բաւական չէ՞ կեղծերի հետ ժուր գալդ.  
Ամօք չէ՞ քեզ, երկար ադեն նրանց ընկերանալդ.  
Քեզի բոլոր գիտցողները, ապուծանանկ են տալիս  
Հասկացիր որ այդ վարժովդ, արժան չէ ողջ մնալդ:



Դուն այդ վարժով հեռացել ես աշխարհի նոյս փառքերից.  
 Կատարեալներից մարդ չկայ, քեզի ընկեր սրտակից.  
 Եկ ինձ լսիր ու հեռացիր, չար կարավանի միջից,  
 Որը պատիւ չի բերէ քեզ երամից դուրս մնալից:

Հասակդ առած կարգին մարդ ես, քեզ խրատն էլ ի՞նչ կանէ,  
 Վարդի ծաղկի նման բացված, երեխեքիդ խնայէ.  
 Վերջ տուր հարքեցողութեանդ, ազնվութիւն պաշտպանէ.  
 Հրնվի ամբողջ գերդաստանով մինչեւ քո մահանալից:

Յաւ եմ զգում դրութեանդ համար ազնիւ դեռահաս.  
 Երգիչ Սմբատիս խրատին լսողին չի տայ վնաս  
 Ինչո՞ւ համար պարապ անգործ գինետներում ման գաս.  
 Քաղցածութեանդ օրն է բերում այդ քո ոլորանալից:



## ԱՆԱՐԺԱՆ ՍԷՐԸ

Մարդու աշխարհի մէջ խնդում,  
 Որտի՞ց սիրականից կուգայ.  
 Անչափ ուրախութիւն հրնում.  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Սիրականի մօտ շարունակ  
 Օրերը կ'անցնին արագ,  
 Վայրկեան մարդու հակառակ,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Մարդ որ ունենայ մեծ գումար,  
 Թէ նա պահէ մէկ սիրահար.  
 Հարիւր պարտքը կ'եղնի հազար  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Սիրով մէկի գործն անկատար,  
Կը տանջվի միշտ չարաչար,  
Նրա մահն է շուտ անպատճառ  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Ունեցողը ուղղութիւն,  
Մարդկանց կամեցող բարութիւն,  
Նորա վերա վատ բնութիւն,  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Մարդս ունենայ լեզու՝ նարտար  
Գլուխն էլ լինի գաղափար  
Նրան կարծելուց խելագար  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Սիրական պահող գիտունը,  
Կը կորցնէ յարգութիւնը.  
Անգամ հարբեցողութիւնը,  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Մարդու չար գործողութիւնը,  
Կովի բարկացողութիւնը,  
Ազգին մօռացողութիւնը,  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Սրտի անհանգստութիւնը,  
Չունենալ համբերութիւնը,  
Գործածել հաճոյութիւնը,  
Որտի՞ց, սիրականից կուգայ:



Շատ քաջեր սիրոյ պատնառեն,  
 Զիտեն իրանց չարն ու բարին:  
 Ընկերացած են վատթարին,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Մարդ իւր պատիվն ուրանալը,  
 Կատարեալ վարժ չունենալը,  
 Մարդուս իւր շուտ ծերանալը,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Ով իմ քաջ ազնիւ ընկեր,  
 Լսիր խրատներս անհամբեր.  
 Մարդկանց վերայ ամօթանքներ,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Գիտցիր ամօթանքի կեանքը,  
 Որն է մարդկային մեծ ջանքը,  
 Ամեն մի տեսակ փորցանքը,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Խնդրի նիշտ նպատակը,  
 Մուրացկանութեան տօպրակը,  
 Քառ գալուց մարդուս քամակը  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Ով որ սիրական ունենայ,  
 Բարեկամն իրմից կը հեռանայ,  
 Թշնամիքը կ'աւելանայ,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Սիրական պահողի կեանքը,  
 Զուր կ'երթայ իւր աշխատանքը.  
 Իւր ծերութեան մօլորանքը,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Անչափ է համեղութիւնը,  
 Կրկնապատիկ դառնութիւնը,  
 Մարդում անձնասպանութիւնը,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Գրաւիչ դուրեկաններից,  
 Սիրական, ազնիւ ցեղից,  
 Զրկված շատ կան տանից տեղից  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Մարդում որ անպատիւ փանչեն,  
 Շարունակ դատարան կանչեն,  
 Մեղաւոր էլ չեղնի փնտնեն,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:

Այդպիսի մարդը շարունակ,  
 Կը գործէ չափազանց արագ,  
 Պիտի լինի անվերջ մշակ,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:


Մարդ որ դիմէ օտարութիւն,  
 Եւ գտնի մեծ յաջողութիւն,  
 Միտք չբերէ գերդաստան, տուն,  
 Որտի՞ց, սիրականից կուգայ:



Ուղիղ զուտ սիրականները,  
Կ'ուզեն հաւասար սէրերը,  
Նրանց յաջողութիւնները  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Լինելը սիրոյ հպատակ,  
Իւր սեղանին մեղր ու կարագ,  
Մարդուս սիրտը ծաղր ու կատակ,  
Որտի՞ց, սիրականից կուգայ:

Նրգիչ Սմբատս օտարութիւն,  
Կրում է սիրուհու սիրոյն.  
Իւր սպասողին նեղութիւն.  
Որտի՞ց, սիրականից կուգայ:



## Մ Ր Ց ՈՒ Մ

Ախմիտին տես, փոքր յաջող, վայրկեանի մէջ նոյն կուգայ.  
Մեծ ծովի հետ դիրք մտնելով, մէջը մտէ լող կուտայ.  
Հանդարտ ծովի ալիքներից, բազուկները յոգնելուց,  
Խեղդվելուն մօտ իւր ձեռքերով, իրեն գլխին հող կուտայ:

Գիրքը որքան մեծ որ լինի, բազում քերքեր ունենայ,  
Թէ որ մէջի պատմութիւնն, կրնատելով պիտ վերջ տայ,  
Իրմով ուսում առնող տղան, անշուշտ յիմար կը մնայ.  
Ինչ դիրք մտնի կամ կը յաղթվի, կամ անկատար քող կուտայ:

Վայրի ծաղիկն էլ գոյն ունի, վարդի ծաղիկին յարմար,  
 Բայց տարբեր բոյս ու հոտ ունի, որ փնտռենք ազգատօմար.  
 Նոր կեանք երջանկութիւն կուտայ, երգս ինձ սիրողի համար  
 Այս խրատիչ իմ տողերս, քեանամուս նոր ոխ կուտայ:

Երգիչ Սմբատս հաստատ վնոռվ դրած եմ ուխտ ու գրաւ.  
 Այս վայրկեանիս նոյն մարդն եմ ինչպէս առաջ կայի իրաւ.  
 Թող այն մարդ գոյն դա առնի, պահմանազանց բուռ մտաւ,  
 Ամօք կրող մարդի համար, այս խօսքերս քող կուտայ:

— † —

## ՆԽՇՈՒՆ ԴՈՒԲԷԻԹ

Մանկութիւնից մինչեւ այսօր,  
 Ուրախ օր խնդում չեմ տեսել.  
 Դէպ ինձ հոգ տանող մասնաւոր  
 Մարդ եմ փնտռում չեմ տեսել:

Ամբողջ ժամանակումս հաստատ,  
 Դեռ տեսած չեմ յանձս ազատ,  
 Անկեղծ ճիշտ ընկեր մը հարազատ,  
 Ամբողջ աշխարհում չեմ տեսել:

Հասակս հասած է քառասուն,  
 Շաղաղված եմ մէջ վերքերուն  
 Անգամ կաթիլ մը առողջ յարիւն  
 Իմ երակներում չեմ տեսել:

Երգիչ Սմբատս եմ բաղթես,  
 Ամեն դառնութեան տէր եմ ես,  
 Հազար նպատակներիցս  
 Մէկն եմ որոնում չեմ տեսել:



## ԶԵՄ ՈՒԶԷ

Երբ մարդկային ընկերութեան մէջ մտնեմ,  
 Զեմ ուզէ իմ նարտար լեզուս լալ մնայ.  
 Ուխտս է ով ինձ սիրէ, իւր հետ նիշտ վարեմ,  
 Զեմ ուզէ վարմունքիս մէջ սխալ մնայ:

Բնական վարվել եմ այս գաղափարին,  
 Պատենն առնելով ինձ, վեհ այգեպանեն.  
 Ինչպէս նրա խնամքը իւր բուրաստանին  
 Զեմ ուզէ այգուս մէջ փուռ մնալ մնայ:

Յոյսս վեհից ինքս ինձանից հրովարտակ  
 Զեմ սիրէ այդպէս դատ կ'ուզէ քարկանաւ  
 Ագռաւը սոխակի վերայ շարունակ  
 Զեմ ուզէ երգելուն ծաղրանալ մնայ:

Սմբատս չեմ մօռնայ վարքիս յարմարը  
 Բաղ չեմ քողնի ձեռքիս անվան հնարը.  
 Առ նախանձոտ մարդկանց լարած քնարը  
 Զեմ ուզէ լարերից հատ մնալ մնայ:

— † —


## ԽԵՆԴ ԱՆՊԱՏԻԻ

Խենի անպատիւ յիմարներին միտքս խառնել չեմ ուզում,  
 Բանտից փրկվելու հնարիչ, խրատն առնել չեմ ուզում.  
 Վեհ խելահաս պարոններից, խրատ կուգեմ մշտական,  
 Կեղծերի բիւր քարոզներից, մի կարն քառ էլ չեմ ուզում:

Տխուր սիրտս վատդարի հետ, հրնվիլ բանալ չեմ ուզում,  
Անկատար ուխտս, կատարեալ նրանց խօսքով չեմ ուզում,  
Նրանց յոյսով իշխանութեան, տիրանալու չեմ ուզում,  
Իշխող պարգեւ, մեծ գրպանով, անգին փարն էլ չեմ ուզում:

Հայրս ու եղբայրս քեկուզ լինին, կեղծ խօսիլը չեմ ուզում,  
Բոլորովին որ մերգ լինիմ, զգեստ տալը չեմ ուզում,  
Կախաղանից ազատելու, դէպ ինձ գալը չեմ ուզում,  
Գերդաստանով փաղցած մնամ, դայ գումարն էլ չեմ ուզում:

Տէր Սմբատիս յոյսը Դու ես, ուխտէս դառնալ չեմ ուզում,  
Ինձ բարի կամեցողների, բարիքն մոռնալ չեմ ուզում,  
Խափեքայ վատքարների հետ, ընկերանալ չեմ ուզում,  
Կեղծ ընկերոջ հետ քեմամուս, հարված զարնել չեմ ուզում:



## ԵՐԳ ՀԱՆԴԵՍԻ

Նպատակներդ հրնվելու  
Բարի եկաք ինձ հիւր այսօր,  
Որպէս ինձի տեսնվելու,  
Բարի եկաք ինձ հիւր այսօր:

Հանիք ըմպել մէկ մէկ քաժակ,  
Թնդքեմ պետականից հեզ կեանք,  
Կ'ուզեմ միշտ յաջողակ մնաք,  
Բարի եկաք ինձ հիւր այսօր:



Իմ անկեղծ ընկերներ յարգոյ,  
 Բաւ է որ կեանքս տամ ձեզ զոհ.  
 Իմ թանկագին հիւրեր, սիրոյ  
 Բարի եկաք ինձ հիւր այսօր:

Երգիչ Սմբատիս վերքերը,  
 Կը զատէ ձեր անկեղծ սէրը  
 Օրհնէ ձեզի Փրկիչ Տէրը  
 Բարի եկաք ինձ հիւր այսօր:

— + —

## ՍԻՐՈՅ ԳՈՎԵՍՏ

Գեղեցիկ անմահ միայն մի հատիկ  
 Աշխարհի մէջ մէկ սիրուհուս պատկերը.  
 Լեզուն քաղցր, ինքը հեզ ու երջանիկ  
 Սիրտ կ'երեցէ ձախ նայելուց աչքերը:

Բոյը ոչ կարն ոչ բարձր է ինձանից,  
 Ցեղը քնական գեղեցիկ ազնիվից.  
 Արշալոյսին որ դուրս ելնէ օթադից,  
 Իրմից գոյն կ'առնեն նորաքուիս վարդերը:

Դէմքը արեգակին կարծես լոյս կուտայ.  
 Բռնակալներին ազատման դատ կուտայ.  
 Մարդկանց տկարութիւնն իրմից զատ կուտայ.  
 Համեղ լեզվի քառքառածի վարդերը:

Գրավիչ քաղցրախօս ինչպէս Այրիւր.  
 Անունդ տարածուած որպէս Փարիզը.  
 Թող էրվի շարունակ Սմբատ երգիչը,  
 Ամեն վայրկեան, միտք բերելուց այտերը:



## ՔՈ ԳՈՐԾՔԻԴ ՀԱՄԱՐ

Քանի՞ անգամ երիտասարդ քեզ ասի,  
 Որ այդ գինեմօութիւնիցը զատէ քեզ,  
 Կարծում էիր ենթարկում էի վնասի,  
 Որ չես լսում հիմա ինքդ, տանջէ քեզ:

Մարդ ինքը որ իւր պատիւը չգիտնայ,  
 Մարդկանց խրատն իւր մօտ վարկեան չի մնայ.  
 Թէ վարմունքդ այդպէս շարունակ գնայ,  
 Մնաս քաղցած մարմինդ մերկ, շատ չէ քեզ:

Հիմա ինչո՞ւ մնայիր կուշ եկած ու խեղճ,  
 Լաւ էր հրնվէիր չընկնէիր մտքի մէջ.  
 Նորից դու քեզ հոգայ, տուր այդ դիրքին վերջ,  
 Մեծ դատաւորի պէս, ինքդ դատէ քեզ:

Երբ դարձ եկար կ'ըլլաս մարդ պատվոյ արժան  
 Կը բազմանան յաջողութիւններդ օրական.  
 Էլ չի լինի պակաս քեզի ոչ մի բան,  
 Եկ այդ խեղճութիւնից ինքդ, ազատէ քեզ:

Կրէ մեծ ամօթանք, դէմքը ընկերիդ,  
 Որ նա չունի պատկեր նման պատկերիդ,  
 Մեծերն էլ չեն գերադասէ մեծերիդ,  
 Կաց խորամանկ ու պարկեշտ, նկատէ քեզ:

Բազուկներդ ուժեղ, դէմքդ ահարկու,  
 Ունիս պայծառ աչքեր, բերանդ լեզու,  
 Դեռ նորահաս, առողջ կեանք ունիս դու,  
 Ինչո՞ւ մէկը ըստոր, գնահատէ քեզ:




Լսի՛ր, այս է վերջը գինեմօլութեան,  
 Մարդուս կ'ենթարկէ միշտ անպատվութեան.  
 Տանելով քեզ դուռն մուրացկանութեան,  
 Կը գրկէ մարդկութեան, ասպարէզէ քեզ:

Կարդայ պատմութիւնը մեր քաջ Վահանի,  
 Լսիր խրատները երգիչ Զիվանի,  
 Եղիր մարդ ազգասէր, պէս քաջ Վարդանի,  
 Զանա, վեհանձնութիւն նպատակէ քեզ:

Վերջ ի վերջոյ, որ դառնաս մեծ պատվոյ տէր,  
 Ներկայ դէմքդ ձեւ կստաանյ շատ տարբեր.  
 Կուգեն ընեքանալ քեզ հետ իշխաններ,  
 Մեծ յարնգանքներ ամեն կողմից պատէ քեզ:

Մարդս մարդ է աշխարհի մէջ, ասել է,  
 Ամեն մարդ էլ կեանքերի մէջ մտել է,  
 Երգիչ Սմբատիս էլ գլխին եկել է,  
 Պարտականութիւն է նիշտը, խրատէ քեզ:




## ԱՆԿԵՂԾ ՍԷՐԸ

Անճաման ծաղիկ սիրական, քեզ կը սիրեմ միայն քեզ.  
 Դեռահաս կեանքիս համաձայն, քեզ կը սիրեմ միայն քեզ.  
 Բո դէմ ողջ աշխարհը անցնելու, ինձ վնաս չի նշն,  
 Նորից քեզ կուգեմ անպահման, քեզ կը սիրեմ միայն քեզ:

Միլիոններով քարօք պէտքերն աշխարհի հետ մէկ բաժին.  
 Ծով ու ցամաք ամբողջ շէնքեր աշխարհի հետ մէկ բաժին.  
 Միլիոններով դառ վերքերը, սիրունուս հետ մէկ բաժին  
 Միլիոն տար հետդ մուրացկան, քեզ կը սիրեմ միայն քեզ:

Միլիոններով գործարաններ, միլիոն արկղ անգին ֆար.  
 Միլիոններով նաւեր լցրած, ոսկի արծաթ ու գուհար.  
 Միլիոններով մեծ խանութներ ինձ գրավելու համար,  
 Քո հետ Սմբատիս կախարան ֆեզ կը սիրեմ միայն ֆեզ:



### ԿԵԱՆՔԻՍ ՎՐԱՅՈՎ

Իմ անձս վարդ ծաղիկի պէս,  
 Անվտազ անփորձ բոյս չունիմ.  
 Երեկոյից մինչեւ ի լեյս,  
 Առողջ մնալու յոյս չունիմ:

Իմ անցկացրած հասակիս,  
 Մէջն այս ունայն աշխարհիս,  
 Աչքերումս փափափներիս,  
 Բնաւ տեսնելու լոյս չունիմ:

Մանկութիւնից սիրտս վրդով,  
 Ինչպէս մի մեծ ալեկոծ ծով  
 Ուրախութեամբ ինձ վերայով,  
 Անցած մէկ արշալոյս չունիմ:

Աւագեան Սմբատ երգիչը  
 Պարգում է աշխարհին վերքը  
 Ասում է ողջ կեանքիս մէջը  
 Վայրկեան մը անտարակոյս չունիմ:



## ԱՇԽԱՐՀ ՀԱՅԱՍՏԱՆ

Շատ աշխարհներ տեսայ, նոյնպէս շատ ազգեր.  
 Հայաստան, մէկ քեզ է գովել հարկաւոր.  
 Տեսայ շատ այգիներ, եւ անքիւ լեռներ.  
 Այդ բոլորին Արարատն է թագաւոր:

Լեռներդ հպարտ, ու պտղատու են,  
 Գետերդ ձկներով լեցուն լողում են,  
 Մի բաժակ ջուր խմոհն քո աղբիւրներէն  
 Տկարն առողջ կզգայ, ծերն ըմպե՛հ հօր:

Հայ ազգը ծնված է պատվով ի բնէ.  
 Խաչապաւտ կրօնից անբաժան մէկն է.  
 Մեծից փոքրի սէրը, գոյթը թող մեկնէ  
 Ով որ հայ սիրտը ճիշտ քննէ այսօր:

Ով որ կուգէ փնտռել պատիւ ու նամուս.  
 Հայաստանից բացի, ոչ մի տեղ կայ յոյս.  
 Անարատ, անկեղծ սէր համբոյր մարդուս  
 Վստահ իր հայի իգականից պատվաւոր:

Շիրակայ գաւառի դաւտերը մերձակայ  
 Հացի առատութեան չափ սահման չկայ.  
 Առպաչայի ափի գիւղերին չերգեայ,  
 Տուր բարեւ Սմբատէս Անիին սգաւոր:

## Բ Ա Յ Ա Թ Ի

Քաջ ազնիւի իւր ասածը,  
Անշուշտ կատարած կը լինի.  
Երախտամօռի առածը,  
Վերջը ուրացած կը լինի:

Թիթեռը տարված կրակին,  
Զի սիրում լոյս արեգակին.  
Անառակը հայրենիքին,  
Իսպառ մօռացած կը լինի:

Երգիչ Սմբատ դու այն մարդուն,  
Սիրէ եթէ խիղնս է արթուն.  
Յարգողին իւր ծնողներուն,  
Ով որ յանձն առած կը լինի:

— † —

## Դ Ր Ա Մ Ի Ն

Ո՛վ ստակ, քո հզօր ուժդ, մարդկանց վեր ու վար քող.  
Դու ես մարդկանց սրտերի մէջ, նետ ու անեղ, սուր ցցող.  
Խենդ խելահաս գոգող չկայ քեզ ունեցողն իշխան է.  
Ամեն տեսակ վայելչութիւն, հրնանք ինքդ ես կամեցող:

Արդարութիւն բարի հոգի, խիղն որ կասեն քեզ մօտ կայ.  
Քեզ չունեցողների մօտը, ամեն մի կերպ բան չկայ.  
Մարդ մը աղքատ, վնիռն արդար, բայց նրան լսող չկայ,  
Զբաւորին ո՛չ ընկեր կայ, ո՛չ խնջոյքի հրավիրող:



Ըստակլ դուն որ արքուն լինես, գովասանես իմանաս,  
 Բնականիցդ շատ հպարտ ես, էլի կը հպարտանաս:  
 Երգիչ Սմբատիս գովեստի փոխարէն ընծայ կտաս,  
 Որ եղել եմ վեհ անունդ, աշխարհի մէջ հրչակոզ:

— † —

## Խ Ր Ա Տ

Ո՛վ մարդ, քանի կարաս դիրքդ պինդ պահէ,  
 Ուրիշների յոյսով քաղցած կը մնաս.  
 Օտարների քաղցը լեզվին մի նայէ,  
 Բոլոր ընկերներէդ դուն ցած կը մնաս:

Քո գաղափարդ ընտրէ քեզի դատաւոր,  
 Կ'երթ-վեմ, որ չես տեսնի մի վատ օր.  
 Քո խելքովդ զարըդ լարէ ամեն օր  
 Քեզ հետ մրցողներին տարած կը մնաս:

Միշտ չես գտնել մարդիկ, որ գաղտնիք յայտնէ.  
 Կեղծին մի ընկերանայ, զուր օրեր վատնէ.  
 Քեզ ուէ կերպ չարին կը մատնէ,  
 Տես ինձ նման միշտ մօլօրված կը մնաս:

Երգս ընթերցող քաջ իմ դէպքիս նայէ,  
 Ինձ հաշվէ օրինակ քո անձդ շահէ.  
 Փորցիր այս իմ խրատներս մի պահէ  
 Երգիչ Սմբատիս պէս կորած կը մնաս:

## Պ Ա Ր Կ Ե Շ Տ

Կեանքս գոհ տամ ես այն պարկեշտ տղային,  
 Որ պահում է մաքուր նա իւր բերանը.  
 Կը յիշեմ ընկեր մեծագոր իշխաններին,  
 Թէ երդված է պաշտպան իւր հօր անուանը:

Կ'սպասեմ այդպիսի վեհ անձնաւորի,  
 Դէմ երթայ ամեն ազգի, կայսերի.  
 Խօսի մասին մեր Հայոց հին հարցերի,  
 Լինի փրկող իւր Հայ ազգի արեանը:

Այսպէս տղային գովասանք կուտամ,  
 Սմբատս մեծ պատիւ ու յարգանք կուտամ.  
 Աչքիցս լոյս, կեանքէս կեանք կուտամ իրեն  
 Կ'ուրախանամ շարունակ յաջողութեանը:




## Խ Ն Դ Ի Ր Ս

Տէր իմ, որ ստեղծել ես ինձ, ինչպէս կանգն է պահէ զիս.  
 Ինչ որ հարկաւոր է մարդկանց, նոյնը տուր ինձ շահէ զիս.  
 Չար եւ բարի բնութիւնը, մարդկանց տվողը Դու ես,  
 Գուցէ մեծ սխալմունք մը ունիմ, ինքդ կարգադրէ զիս:

Տուր ինձ ազնիւ խելք ու բնութիւն, այս աշխարհի մէջ,  
 Մի կամենայ ինձ վաղ դրութիւն, այս աշխարհի մէջ,  
 Հարտար լեզվիս չեմ ուզում լռութիւն, այս աշխարհի մէջ  
 Որ ինքդ ես ստեղծել ինձի, ի գուր մի չարչարէ զիս:



Քեզնից բացի մէկը չունիմ, ստեղծով իշխան Տէր իմ.  
Ամեն կերպով քեզանից գատ, մի պաշտպան չունիմ Տէր իմ.  
Յոյսս Դու ես, բնաւ չարի հետ պահման չունիմ Տէր իմ  
Սմբատիս Քո ուզածիդ պէս, խնդրեմ կառաւարէ զիս:



## ՄՈՒԹ ԱՇԽԱՐՀ

Պարկեւտին որ ձախորդութիւն պատահի,  
Կռպիտները նրան խելագար կ'ասեն.  
Միայն պատահելուց օգնութիւն չափի,  
Համարեայ արքայի հաւասար, կ'ասեն:

Իրենի իրենց վնասները չգիտեն,  
Ժելս կեանք մը ապրելով սորված են հիմէն,  
Նոյնն է երեխանց պատկերը ի բնեն  
Մարդի պէս ապրողին գուրկ աննար, կ'ասեն:

Ճարտար խօսալը, գրել կարդալը,  
Կեանքի մէջ մտնելը, հրավիլ ժուր գալը,  
Զգիտցողները, իրենց կով մ'ունենալը  
Իրենց կարծիքովը մեծ հնար, կ'ասեն:

Մէկի գործը որ լինում է քիչ ձախորդ,  
Յանկարծ ընկնում է իւր անվան մէջը որք.  
Նա դառնում է բամբասանքի յանախորդ  
Մէկ տօլար տալիքը մէկ հագար կ'ասեն:

Մարդիկ իրենց փոքր յաջողութենէն,  
 Յոյս դնելով մօռանում են անցեալին.  
 Նեղ պարագայում կրթված ուսեալին  
 Անհովիւ մոլորված մի ոչխար, կ'ասեն:

Շատերն իրենց աչքի մեծ փայտը թողած,  
 Մարդկանց աչքի չոփը տալիս են իմաց.  
 Իրենց տակն ու վրան դեռ չմտածած  
 Մարդկանց մի յանցանքին չամչնար, կ'ասեն:

Իրենք յիմար խելացուն կ'անեն հեգնանք,  
 Բացի հացից, ամեն պտուղից փափաք.  
 Կեղտին, ոջլին յանձնատուր ու հպատակ,  
 Մահուր ապրողներին, խիստ յիմար, կ'ասեն:

Ո՛վ մարդ, գլուխիդ մէջ գաղափար պահէ,  
 Մեզ վերայ անցնողը ունայն աշխարհ է.  
 Բաղդը անգամ ողջ է, անգամ տկար է,  
 Գոռոզ մարդին հող ու ջուր վատթար է, կ'ասեն:

Մարդ որ դիրքը պինդ է պահում պատվի դէմ,  
 Մարդկանց հետ վարվում է համեստ ու խոհեմ,  
 Երգիչ Սմբատս այսպէս դատի վկայ եմ,  
 Ամդպէս վարվողին էլ կեղծաւոր, կ'ասեն:

— + —

## ՍԻՐՈՒՀՈՒՍ ԴԷՄՔԸ

Բոլորված լուսինի նման ելար ինձ դէմ սիրական.  
 Ուզածս մէկ քաղձանքի դէմ, ժպիտդ ինձ հազար տվեց.  
 Հին ու նոր վերքերս գատելով ինձնից բո այդ աչքերդ,  
 Տխուր սրտիս ուրախանալու, հրնվելու պատճառ տվեց:



Արշալուսին բացված, վարդի պէս այտերդ շարունակ,  
 Երեսիդ կեռ եկած է սեւ ունֆերդ որպէս աղեղնակ.  
 Երկնային հրեշտակածել, երգում ես ինչպէս սոխակ,  
 Զուտ բնութիւնս առաւ ինձնից, երկչոտ ու վատքար տվեց:

Դեռ չեմ տեսել քեզ նման հեզ ու մի գեղեցիկ քեզեն.  
 Բոլորովին տարբերիք ինձ, ստացայ նոր դիրք քեզեն.  
 Երգիչ Սմբատս ըստանալով, փոփոխակի միտք քեզեն,  
 Լայն նակատդ պատվուարժան, քողն երեսէս վար տվեց:

—†—

## ԻՄ ԵՂՔՕՐՍ

Յոյսովդ ապահով եմ ես,  
 Բանի փափաք չունիմ Գաբրիէլ,  
 Բացի տեսութիւնիցս քեզ,  
 Մի նպատակ չունիմ Գաբրիէլ:

Տասնեւչորս ամ օտարական,  
 Ապրում եմ քեզանից բաժան.  
 Վիրաւոր նեղ սրտէս միայն  
 Միտքարանք չունիմ Գաբրիէլ:

Քեզի պարգաբանեմ երգով,  
 Ժամերս անց է կենում վրդով,  
 Սրտիս մէջը մէկ եռանդով  
 Ծաղր ու կատակ չունիմ Գաբրիէլ:

Երգիչ Սմբատիս ապագայ,  
 Քեզանից գոյգ մի յոյս չկայ.  
 Տէրը որ մեզ երկար կեանք տայ  
 Օր մ'էլ դէպ քեզ կուգամ Գաբրիէլ:

## ՏԱՂ ՍԻՐՈՅ

Ազնիւ, գեղեցկութեանս համար,  
 Որքան գովեմ բաւական չէ.  
 Խոնար բնութեանդ համար,  
 Որքան գովեմ բաւական չէ:

Կանթեղի նման աչքերդ,  
 Բոլորված լուսին պատկերդ,  
 Այդ ջալահիր ատամներդ  
 Որքան գովեմ բաւական չէ:

Սմբատիս կեանքի կէսն ես,  
 Մահիս ենթարկող լրտեսն ես,  
 Այսպէս հազար երգերով քեզ  
 Որքան գովեմ բաւական չէ:

— † —


## Ա Ղ Ե Ր Ս Ա Ն Ք

Աշխարհի մէջ իմ հոգսերէս տալող մեկնութիւն չունիմ.  
 Դառն անտանելի վերքերէս անգամ փրկութիւն չունիմ.  
 Ընկած օտարութեան մէջ եմ, եղբօրս հետ միասին,  
 Խիստ հոգնած դեռ կսպասեմ մէկից օգնութիւն չունիմ:

Մտածելով տիւ եւ գիշեր վերայով դէպ իմ ազգիս,  
 Օտարներից բան չեղնելով ինքս եմ ննչում իմ անձիս.  
 Մինչեւ այսօր դեռ ինձ վերայ ուրախ վայրկեան չէ եկել,  
 Մէկ հաստատ եռանդով ծաղրանալու բնութիւն չունիմ:



Ինքս եմ արել իմ ձեռքովս, թող տանջվիմ չարաչար  
 Դեռ բաւ չէ ինձ վերայ որ գան, այսպէս տանջանքներ հազար,  
 Երգիչ Սմբատս իմ բախթիցս, բացի ուրիշների հետ,  
 Բնաւ ոչ մի կերպ հակառակ վիճաբանութիւն չունիմ:



## ԽԱՐԴԱԽ ՍԱԲՐԻԶԸ

Երեք օր զիս համօգոցի,  
 Որպէս կարն եմ մագերս դեռ.  
 Բայց այսօր կտրել տվեցի  
 Վախեցայ թէ ընտրեն Տէրտէր:

Իսկոյն թրաւել վնոեցի,  
 Այստեղ այնտեղ փնտռեցի.  
 Մի տեղ «պարպըր» նտակեցի  
 Որ նստած պարապ ծխում էր:

Այս սափրիչը որ ես տեսայ,  
 Վնոի թէ ախֆատ է սա.  
 Խորհի, լաւ է սուղ չի ըլլայ,  
 Որով ունիմ անթիւ պէտքեր:

Երբ սկսեց, ինձ թրաւեց,  
 Ճիշտ կաշիս երեսէս տաւեց.  
 Դեղն ածեց, «փառուոր»ով մաժեց,  
 Երակներս եղան կեռկեռ:

Սպիտակ «փառուոր»ն ու արիւնս,  
 Տարբերին գեղեցկութիւնս.  
 Տառաւ նոր բացված վարդ գոյնս  
 Վիզս երիտասարդ, ըստվեր:

Զարմանալով ես գեղեցկացայ,  
 Միայն ցավերով արթնցայ.  
 Ամօթանփից գաղտնի լացայ,  
 Քանի որ շատ մոմոռում էր:

Սկսեց մագերս կտրել,  
 Ծո՛ւ, ի՞նչ կտրել, պոկեց թել թել.  
 Հրաճեմ աշնալիսի էի հարբել  
 Որոնում էի օգնող ընկեր:

Վերջն հայելին նայիլ տվեց,  
 Ազվոր ինձ վկայել տվեց.  
 Երբ որ ծախսերը հաշիվեց  
 Եղայ գործով յաղթված «լօյրը»:

Ասի, ի՞նչ է իմ հաշիվս,  
 Ասաւ, միայն տօլար ու կէս.  
 Քանտի ծոցս, գրպաններս,  
 Անգամ դուրս չեկաւ մի տօլար:

Խօռ խօռ նայեց մէջ իմ աչքիս,  
 Սկսեց լաւ անպատվել գիս  
 Յանկարծ պատահեց մի «փօլիս»  
 Պատմեց ինձ որպէս պարտատէր:

«Փօլիս»ն հարցրեց հանգամանք  
 Պատմի մէկ մէկ գործի կեանք.  
 Ասաց, իրենն է ամօթանք  
 Մէկ տօլար հաշվում է տարբեր:



Հաշվեց յիսուն սէնթը տվեց,  
 Ու «բառքառ»ին խիստ անպատվեց.  
 Նոմէրն ու անունը գրեց,  
 Ինձի ասաւ, գնա՛ ընկեր:

Երկու օր վերջ տարան դատի,  
 Նրա գործը գնաց վատի,  
 Բանտարկին տասին սհաթի,  
 Տասն ու հինգ օր գօր ու գիշեր:

Այսպէս յանկարծակի մի դաւ,  
 Կեանքիս մէջ չէր եղել բնաւ.  
 Բարոյական խիղճն իրաւ,  
 Հոգ տանող օտարիմ անտէր:

«Տիֆ» էր «փօլիս»ի անունը,  
 Պարկեշտ իշխան բնութիւնը,  
 Խիղճն ու իրականութիւնը,  
 Լոյս էր տալում ինչպէս լապտեր:

Ամեն գործս էլ ամսպէս գնաց,  
 Խնդրի միտքն պարզելու բաց.  
 Ում որ նիշտ յարգեցի սրտանց  
 Եղան յափշտակող դեմեր:

Սմբատիս կեանքն այսպիսով,  
 Փնացաւ անվերջ տիպվածով,  
 Առվակը դարձաւ դէմս ծով  
 Ասեղներն էլ խօշօր բեմեր:

## ՇԻՐՋՐԱՆՑՔԸ ՈՒ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ

«ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ»ը այս օր լոյս տեսաւ  
 Երգերով գեղելու Շիրջրանցիին բուն  
 Կեցցեն բանւորք որ մեզ ոսկէ դար բացաւ  
 Շիրջրանցի վեհ յիշատակ մնայուն:

Կափա գիւղիցը բաժանելով իւր մօրէն,  
 Կարծես հարս են տանում ծանր պար տալէն,  
 Ափին բուսնած վարք մանիշակ ու լալեն,  
 Փունջ փունջ եղած ծաղիկներով գոյն զգոյն:

Բանւորների ֆրոնիւսներով զարդարուած,  
 Քողն երեսիդ քագուհի ես պսակուած,  
 Հայի մուրների աղմուսներից նուակած,  
 Եղանակով փառք է տալիս ամենուն:

Կեցցեն կրկին կեցցեն հայ բանւորները  
 Զարդարեցին Շիրակի մերկ դաշտերը  
 Թող բազմանան այգիք, պարտէզ, ծառները,  
 Որ լինի Շիրակը հարուստ մեծատուն:

Կարմիր այտեր օրիորդներ Շիրակի,  
 Քաջի սերունս պատանիներ Շիրակի,  
 Կտրիչ մարդիկ նղձուն հարսներ Շիրակի,  
 Բոլորդ ունիք Հայի դրոշմ մեծ անուն:

Երգիչ Սմբատ նիշտ գաւակն ես Շիրակի,  
 Պանդուխտ ես բայց հպատակն ես Շիրակի,  
 Դու էլ անբախ աւերակն ես Շիրակի,  
 Երբ յիշում ես քո պատանի օրերուն:



## ՄԻ ՔԱՆԻ ՖՐԷԶՆՈՑԻ ՀԱՅԵՐ

Ֆրէզնօի հայ գաղութից, ծանօթացայ շատերին.

Շնորհիք, մարդկութիւն արժանի, մինչեւ անգամ տեսած չեմ.

Կոպիտ ու անկիրք մեծացած, նման անկիրդ վայրենի,

Նամուս, պատիւ ըսած բառը, դեռ ուսումնասիրած չեմ:

Անգործ, պարապ ժուր եմ գալում սրնարանէ սրնարան.

Հայոյանֆով եմ զբաղում, գեաւմիւ բառով տանկական,

Վարմունքները ճիշդ յարմար է Անատոլու մօնօլեան

Կարծես քահանայի տված, քարոզ, քաշակ առած չեմ:

Փողոցներում ման եմ գալում, անկարգ իրար քթելով,

Աննիւք վիճմունքով մրցում եմ մէկը միւսին ստելով,

Խումարբագներին եմ գովում պարկեշտներին տտելով

Հրեայ մուրացկանի մը նման մէկին պատիւ ըրած չեմ:

Անվերջ տանկերէն եմ խօսում, գիտցածների չափ հմուտ.

Տանկաց աշուղներ եմ գովում, եավրում, ասելով կուլտ կուլտ

Սմբատ Հայ գաղութին պատմէ սրտումդ ինչ որ կայ պահուստ

Երգիչ Զիվանն ու Աբովեօնն, Բաֆօին անգամ լսած չեմ:

—†—

## ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆ

Սիրտ իմ, ինչո՞ւ եք դուն ի գուր տանջվում,


Ինչ որ խօսին քո հասցէիդ արժան է.

Ամեն տեսակ դառն վէրքերն այս աշխարհում,

Որ հաւաքեն թափեն գլխիդ արժան է:

Ով որ իւր պատիւը ուղիղ չիմանայ,  
 Հասկացիր որ նա ըստրուգ կը մնայ.  
 Թէ շարժմունքդ այդպէս շարունակ գնայ,  
 Մուրացկանութիւնը անձիդ արժան է:

Սմբատ, թէ որ լինիս հարագատ որդի,  
 Քո մայր հայրենիքդ մտքէդ չի ելնի.  
 Թէ պանդուխտ հրնվելուդ զգաս երանի,  
 Թուք եւ մուրը քո նակատիդ, արժան է:



## ՀԱՆԵԼՈՒԿ Ա.

Այն ի՞նչ բան է, ով ընթերցող, ինչպէս ծաղիկ անթառամ,  
 Յարածամ բացվում է օրին, մեզ համար երեք անգամ.  
 Ամեն գոյնը մեր սրտերում, պաշտելի յիշատակ է,  
 Հաւատացելոց ազգերին, պատկան յատուկ յարածամ:

Ամբողջ տարվայ շրջանի մէջ փոփոխվում են գոյնզգոյն.  
 Աւելի չեն քանց տասը, երգից փնտռէ մեկնութիւն.  
 Պաշտելու այդ յիշատակը մեզ փրկութեան խնդրանք է,  
 Ինչ լինելը երգով ասա, մանրամասը կը հասկանամ:

Երգիչ Սմբատիս կողմիցը, հանելուկն այս իսկական,  
 Պաշտում եմ այս ծաղիկների, ապացոյցը անպայման.  
 Սիրտս նրանցից գատելու, կախաղանի վնիռ տան  
 Պիտ ընդունիմ ուրախութեամբ խնդրելով յօժարակամ:



## ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Օտար երկրի հոյակապ մեծ շենքերէն,  
Քո մէկ անտառ քարը լաւ է հայրենիք.  
Ծաղկալի մեծ պարտիզազարդ դաշտերէն  
Քո էկ անպէտ սարը լաւ է հայրենիք:

Գիւղդ լաւ է օտար մեծ քաղաքներէն  
Հացդ համեղ է, հացէն միրգ մրմնէն.  
Այլ ազգի իմ ամբողջ քաջ ընկերներէն,  
Ազգիս խիստ յիմարը լաւ է հայրենիք:

Ծնողից զատ բան չի սիրէ երեխան,  
Կ'ուզէ ողջ աշխարհը նվիրեն նրան.  
Ներկայ երգիչ Սմբատիցս իսկական  
Քո անպէտք փութ ծառը լաւ է հայրենիք:

— † —

## ՀԱՆԵԼՈՒԿ Բ.

Այն ի՞նչ բան է, ում որ լինի լուսինի պէս լոյս կուտայ.  
Որ ազգի մէջ կուզէ լինի դարձեալ ազնիւ ցոյց կուտայ.  
Հազարաւոր բռնամիտ սրտերը գոգոռով,  
Մեծ նեղութիւն ու ամօքանք, անգամ տարակոյս կուտայ:

Լեզուն մարտար, դէմքը ուրախ, բազուկները ուժեղոտ.  
Պատիւ յարգանք վարելչութիւն, կուգան դէպի իրենց մօտ.  
Կունենան շատ քեկնապահներ իր բռնամտ դէմ երկչոտ,  
Մինչեւ անգամ իւր տէրութեանն պատիւ յարգանք յոյս կուտայ:

Այս պահուստիս կազմվացն է երեք տեսակ հարցերից,  
 Ով ունեցաւ նա միշտ լաւ է, ուժեղ գիտուն կայսերից.  
 Ով որ ուղիղ պարգաբան է պատասխանը այս հարցերիս  
 Երգիչ Սմբատը իւր համար միշտ գովասանք դուրս կուտայ:

— † —

### ՍԻՐՈՅ ԳՈՎԱՍԱՆՔ

Իմ սիրուհունս պէս գեղեցիկ միայն մէկ,  
 Դեռ չէ ծնվել մէկ գիտուն աշխարհի մէջ.  
 Իւր տեսնելուց ամբողջ կեանքիս մէջ երբէք,  
 Դեռ չեմ տեսել ուրախութիւնս սրտիս մէջ:

Տկար լինեմ կ'ողջանամ տեսնելուց,  
 Մեծ հոգսերս մօռանում եմ տեսնելուց.  
 Որմի վարկեան հեռանում եմ տեսնելուց,  
 Մտնում է մեծ տարբերութիւն կեանքիս մէջ:

Մօտիցն հեռանալուց իմ սիրահարի,  
 Կարծես օրս վերաս անցնում է տարի.  
 Բնութիւնս փոփոխվելով վատթարի,  
 Ընկնում է խիստ երկչոտութիւն գլխիս մէջ:

Ստացել եմ այնպիսի մէկ բնութիւն,  
 Չէ թողել ինձ ամօթանք ու գիտութիւն.  
 Երգիչ Սմբատս վառվելով իւր սիրոյն,  
 Գալում է միշտ նարտարութիւն լեզվիս մէջ:



## ԻՆՔՆԱՀԱԻԱՆԸ

Մարդս ինքը իրեն գովելով,  
Հաւանական լինելու չէ.  
Մեծ սիրտ, գոռոզ, իւր կարծիքով  
Պարկեւտ իշխան լինելու չէ:

Զոհեմ ազգիս դէմ, ասելով,  
Բնաւ վախկոտ չեմ, ասելով,  
Մարդս, ես քաջ եմ ասելով,  
Նա քաջ վարդան լինելու չէ:

Ով առվակին կարծէ մեծ ծով,  
Մարդս մարդ չէ դատարկ խօսքով.  
Ծոյլ յիմարի տված յոյսով,  
Կատար մի բան լինելու չէ:

Երգիչ Սմբատին օրական,  
Թերթերը գովասանք դուրս տան,  
Մասին որպէս երգիչութեան,  
Դարձեալ Զիվան լինելու չէ:

— † —

## ՍԻՐՈՅ ԽՕՍՔԵՐ

Սիրտդ գրավիչ, կեանք երեցող.  
Ընկերներից ջոգվար եկար.  
Դէմքդ հրեւտակ երեւող  
Ո՞ւր գգեստաւորվար եկար:

Պիսակներդ զարդ այտերի,  
 վարդ պալասան ծաղիկների,  
 Բայց չգիտեմ ո՞ր պարտէզի  
 վարդի քերից պոկվար եկար:

Սմբատս կուգեմ գիտնալու,  
 Պատնառք քո ծաղրանալու.  
 Դուն ինձ հետ ծանօթանալու,  
 Ո՞րտեղից պտտվար եկար:

— † —

## ՍՈՒՐ ԱԶՔ

Մարդուս մարդ շինողը, ամչեցնողը  
 Պարկեւտ կինն է, ոռօսպինն է ի նէ.  
 Ինքն իրեն յարգողը ու անպատվողը  
 Պարկեւտ կինն է, ոռօսպին է ի բնէ:

Եռանդ ուժ տվողը, չարին ատնողը,  
 վեհ անուն իշխան, դշխունի դատողը  
 Մարդում բանտարկողը ու արձակողը,  
 Պարկեւտ կինն է, ոռօսպին է ի բնէ:

Մարդ զարգացնողը, հարբեցնողը,  
 Անկեղծ սիրողը, խարդախ սովբեցնողը.  
 Մարդկանց դրախթն ու դժոխք դրկողը,  
 Պարկեւտ կինն է, ոռօսպին է ի բնէ:

Աղամից, Եվաից մինչի այս դարը,  
 Սմբատ դեռ կրում ենք կանանց պայքարը  
 Մարդկանց խնդալ նեղեմալու պատնառք  
 Պարկեւտ կինն է, ոռօսպին է ի բնէ:



## ՏԽՈՒՐ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ո՛հ Հայաստան, այրենի հող խեղճ տխուր,  
 Փառք, ծրագիր, գահ դատարանդ ու՞ր է քո.—  
 Աստուածաշուն նոյի թռուներ դուք մաքուր  
 Կայք, թանգարան, մեծ հեմարանդ ու՞ր է քո:

Արհեստաւորների ամենայ ընտիր,  
 Գործերիցդ օգտվան ամեն մի երկիր.  
 Ուսուցիչ, նկարիչ ուսեալ խմբագիր,  
 Զօրք զօրավարք վաճառականդ ու՞ր է քո:

Մի ժամանակ, պապերդ աշխարհ Հայաստան,  
 Իրենց կամքով կատարում էին ամեն բան.  
 Ազատ վայելում էին հանդէս խրաղջան,  
 Բազրատունեանց Գագիկ իշխանդ ու՞ր է քո:

Սմբատ հայրենիքդ դարցած արեան ծով,  
 Իւր տեսնողը տանջվում է կսկիծով.  
 Աւեր տանարները դեռ կան մեր օրով  
 Ապա այսօր բնակարանդ ու՞ր է քո:

— † —

## ՔԱՂԱՔՆ ԱՆԻ

Պատանեկան հասակիս մէջ, լսել եմ քեզ անվանի,  
 Բայց եւ այնպէս չէի հասկացած քո տազնապների Անի.  
 Դարուս յարմար խաղալիքից բացի, ուրիշ հոգս չունէի,  
 Սրանք էր ուրախութիւնս, պէտք չունէի ոչ մի բանի:

Բայց որ փոքր հասակս առայ, սովորա գրել կարդալ,  
 Պատմութիւններից փնտռում էի, դառն վիճակդ իմանալ.  
 Յաւիտեան դժոխքի միայն, դավաճաններիդ անիծեալ,  
 Վասակն ու Մերուժան, Վէսր Սարգիսն է արժանի:

Նստած դարերով խիստ տխուր, որպէս անյոյս ծեր խեղոյն,  
 Կարծես լսվում է բողոքիդ ձայն տկարիս օգնութիւն.  
 Բայց մեզ քվում է մի երագ, ոչ քնած ոչ նիւղ արքուն,  
 Հենց այսօր էր հպատակէս, կամֆին նոյն տավաջանի:

Յիշում եմ վեհ պալատներիդ նակատները քանդակված,  
 Մաս մը աւերակ, մաս մը կանգուն, պարիսպներիդ բոլորուած.  
 Ազնիւ հերօսներիդ ու կայիֆդ, փլատակովդ քնաց,  
 Քո սեփական աշխարհի մէջ նման ես գաղքականի:

Քահանեքը մեզ կրքում են աղօթք երգել շարական,  
 Որպէս մենք քրիստոնեայ ազգ, խաչը կ'ըլլայ մեզ պաշտպան.  
 Մեզ համար գերի ապրիլը եղել է սովորական,  
 Այսպէս մօլութեամբ կրցրինք երկու ծայրը ուրկանի:

Լուրջ նստած խորհում է Գագիկ քաղաւորի արցանը.  
 Կարծես պահած մի գաղտնիք կայ խօսելու իւր բերանը,  
 Մահուր հայ քաջ զաւակների սրտումն այս տեսարանը,  
 Տպում է մեծ վրէժխնդիր, հանդէպ կեղծ Յունաստանի:

Երգիչ Սմբատս տեսնելով խեղն վիճակդ զգում եմ ցաւ,  
 Բայց չեմ դնում ջանք իրական որպէս ինչն է քեզ հարկաւ.  
 Թափառական եմք մինչ այսօր, երբ քո շունչդ դադարաւ,  
 Եղել եմք նիւղ խեղն ու քշվառ, որք, մուրացեան պատանի:



## ԵԹԷ ՀԱՅԻ ԶԱԻԱԿՆ ԵՍ

Եթէ Հայի գաւակ ես, ու Հայ ես գոչում,  
Ո՞ւր է քո պապերի հարստութիւնը.  
Տարիֆով գաղթական յոյսդ դրած ո՞ւմ  
Վերայ, պատմելու քեզ պատեհութիւնը:

Այս երգովս գուցէ զգացումի գաս.  
Քո սիրտդ Արարատն է, վանից մինչեւ Ղարս.  
Գահըդ էր շէնդ Անին, ցաւոց պատուհաս,  
Դավանանդ էր գոռոզ, կեղծաւոր Յոյնը:

Եթէ Բագրատունեանց պալատը տեսնիս,  
Պիտի մեծ վերքերով ընկերանաս զիս.  
Գունէ պիտի խորհես տարաբախք ազգիս  
Սրտից մաքրելու նար գարշահոտութիւնը:

Սմբատիս խօսքերը մէկ հրաման չեն.  
Քեզ դավանան ցուցնելու պահման չեն.  
Մէկ քո գանձդ ազգի համար մի բան չեն  
Պէտք է սիրտդ ու խղնիդ անմահութիւնը:

—†—

## ԶԻ ՃԱՆԶԷ

Երկչոտութեանը միշտ հետեւող մարդը,  
Իւր պատիւն ու իւր ընկերը չի նանչէ.  
Անարժան սիրոյ հետ միտեղովող մարդը  
Յոյս ու հաւատ նիւտ ընկերը չի նանչէ:

Բնութիւնը վատթար չարացող մարդը,  
Մարդկանց երաժ քարիփն ուրացող մարդը,  
Ստախօս, անպատիւ հարբեցող մարդը,  
Կատարեալ վարմունք ու սէրը չի նանչէ:

Իւր ծնողներին միշտ ննչող ատողը,  
Անյոյս մուրացկանին չօգնող գատողը,  
Սուրբ աւետարանին չհաւատացողը,  
Բնաւ նա իւր ստեղծող Տէրը չի նանչէ:

Ով որ կեղծաւորից չմնայ զգոյշ,  
Նա իւր նպատակին կը հասնի շատ ուշ.  
Երգիչ Սմբատի պէս յիմար ու ապուշ  
Իւր վնասող չար անձերը, չի նանչէ:

— † —

## ԱՌ ՆԱՄԱԿԸ ՍԻՐԵԼՈՅԴ

Առ նամակը սիրելուցդ, տես հոգսերը որքան է,  
Եթէ ինձ սիրում ես սրտով ազնիւ լուր պատասխանէ.  
Տիւ եւ գիշեր երազում եմ լոյս պատկերդ ով անգոյթ,  
Դեռահաս կեանքս քեզ համար, ննչվիլը բաւական է:

Քեզանից գատ աշխարհի մէջ մխիթարանք չունիմ ես.  
Առանցի քեզ երջանիկ օր եւ առողջ կեանք չունիմ ես.  
Բացի քո մէկ համբոյրիցդ, ջոկ մի բաղձանք չունիմ ես,  
Թիթեռի պէս կրակովդ վառվում եմ մի խնայէ:

Բոլոր ծածուկ գաղտնիներս ողջ աշխարհին յայտնվաւ  
Ուժ ու կեանքս արդէն գնաց, սիրոյդ համար վատնվաւ.  
Բամբասելով վեհ անունս, հողերին հաւասարվալ  
Իմացիր Սմբատից երգը քեզ սիրահար պատկանէ:



## ԵՐԿՈՒ ԳՈՅՆ

Արդեօք դժվար կա՞ն աշխարհը  
 Աննման սիրուն նարվելեն,  
 Զկայ համեղ բան աշխարհը  
 Նրանց հետ սիրահարվելեն:

Մարդուս գիտուն ինչո՞վ կ'ասեն,  
 Իշխան մարդուն ինչո՞վ կ'ասեն.  
 Քաջ մարդ մէկուն ինչո՞վ կ'ասեն  
 Մարդուս կատարեալ վարվելեն:

Մարդում չար ասելը որ կայ,  
 Խիստ վատքար ասելը որ կայ,  
 Անկիրթ բառ ասելը որ կայ,  
 Անկարգ օղիին տարվելեն:

Առագվայ եմ հեգութիւնէս  
 Բոլորովին զրկւել եմ ես.  
 Սմբատս պարգաբանեմ ձեզ  
 Մայր հայրենիքէս զրկվելեն:

— † —


## ՀԱՆԵԼՈՒԿ Գ.

Այն ո՞վ էր, որ մարկութիւնից միտ չարիքը ատում էր.  
 Բացի իւր զգոյժ մնալէն, շատերին խրատում էր.  
 Մարդկանց կրած սխալմունքը դէմքերից նկատելով,  
 Քաղցրաբառ անարգելով, չար դէպքերից գատում էր:

Ոչ մեծ կարողութեան տէր էր, ոչ էլ այնքան ախգատ էր.  
Մէկ ուղղութեան էր գրավւած, չունէր բնութիւն տարբեր,  
Սրա համար շատերի մօտ պատիւ ու յարգանք ունէր.  
Մահուր կերպով գերդաստանին դիւրին կառավարում էր:

Իւր յարգելի պատվից գրգված տիւ եւ գիշեր տրտում է,  
Հաւատ ընծայելով կեղծիք, անվայելուչ հրնվում է.  
Ամբողջ փափագներն առել է, բայց մէկին սպասում է.  
Երեք պարտականութիւնը մէկէն նա կատարում էր:

Երգիչ Սմբատս գիտնալով գաղտնիքները փառապէս.  
Ոմանք պատմելով են լսէ, ոմանք նիւտ աղանատէս.  
Այս պահուստիս գիրը եօթը, վանկը երեք կուղղես  
Հաւի վեց հազար երկու հարիւր ու երեքով նարվում էր:



## ՔԱՐԱՑԱԾ ՍԻՐՏ

Այսչափ հոգսերն ուսդ առած  
Ի՞նչպէս ես դիմանում, սիրտս,  
Ճիշտ քար ապառաժ ես տառած  
Որով հոգ չես անում սիրտս:

Եթէ նիւտ խորը մտած ես,  
Ամեն մի փառքից զրկված ես,  
Բայց այնչափ խորը քնած ես  
Նորէն չես արթնանում սիրտս:

Ինչո՞ւ է պէտք բոլոր ջանքդ,  
Նաեւ դառն աշխատանքդ.  
Ի գուր անցաւ ամբողջ կեանքդ  
Անգամ չես բարկանում սիրտս:



Երգիչ Սմբատիս իսկական,  
 Միայն ընկերս ես անբաժան,  
 Եթէ դատ կուգես իսկական,  
 Ի գուր չես մահանում սիրտս:

— † —

## ՀԱՅՐԵՆԻՔԻՑ ԶԱՏՈՒԻԼՍ

Հայրենիքից գատվելս ունիտ եօթը ամ է,  
 Օրից օր շարունակ փորձանքի մէջ եմ.  
 Խեղճ թռչունի նման գատված երամէ  
 Բազէիի նանկի մէջ տանջանքի մէջ եմ:

Ոչ մի կողմով չունիմ ապահովութիւն.  
 Սրտումս չկայ հրնման գօրութիւն.  
 Բացի վերքերիցս չունիմ նորութիւն,  
 Այսպէս խեղճ ու մօլօր զրկանքի մէջ եմ:

Խեղճ ու անօգնական ծեր հայր ու մայրս,  
 Հիմայ կովի դաշտն է միակ եղբայրս,  
 Խաւար է արեւս ու գիշերվայրս,  
 Ամեն մի վարկեանիս վտագի մէջ եմ:

Ով անգոյթ բաղդ մինչ ե՞րբ դու ինձ չարչարես  
 Մահըս եմ որոնում սրտով յօժար ես.  
 Խեղ Սմբատս դառն չարչարանքներես  
 Դագաղս սեւ ներկած պատանքի մէջ եմ:

## ԱՆՊԱՏԻՒ ԿԵՂԾ

Անպատիւ կեղծ ողջ մնողեն,  
Պատվով մահանողը լաւ է.  
Անմեղ արդկանց սպաննողեն  
Կրօնքն ուրացողը լաւ է:

Ի՞նչ կ'սպասես դու նրանից,  
Որ դուրս չէ ելլէ իւր տանից  
Տեղեակ չեղնողին աշխարհից  
Մանուկ կուրանոհը լաւ է:

Կեղծ հարուստը բնականից,  
Լաւ չէ խղնով մուրացկանից.  
Զատ ապրողեն գերդաստանից,  
Մօտ տկարանողը լաւ է:

Տեղեակ ես ամբողջ երգերից  
Խորհին պատմութեան գրքերից  
Դարձեալ երգիչ Սմբատ քեզնից  
Խիստ յիմարնողը լաւ է:

—†—


## Դ Ի Վ Ա Ն Ի

Սէր միութիւնն է ազգերը բարձր հրատարակ է,  
Որովհետեւ դավաճանին ննչող ու հակառակ է.  
Ազգ մը որ լինի վարդապետ ու քահանի հպատակ  
Իւր հայրենիքը տարէ դար յուսահատ աւերակ է:



Երեխան ծնվում է մօրից, բուրբուլին մերգ ախֆատ.  
 Երբ զգում է իրեն ֆաղցած, լացով տալիս է գանգատ.  
 Մինչի փափագին հասնելը, պնդած իւր դիրքին հաստատ.  
 Բուրբուլին վախ չի զգում, անգամ սրէ կրակ է:

Երգիչ Սմբատս ազնիւներին, ունիմ յարգելու փափաք,  
 Պարտաւորեալ անկեղծ սրտով պիտի գովեմ համարձակ.  
 Ոեւէ ազգ որ չունենայ Բաժժիի պէս հեղինակ  
 Սեծից փոքրից ուսումները, աննիւթ ու հասարակ է:



## ԻՆՔԴ ՔԵԶ

Ո՛րդ դեռահաս ի՞նչ կեանքի ես ծառայում.  
 Նայէ ընկերներդ դատէ ինքդ քեզ.  
 Այս եւ այն կողմդ երբէք չես նայում,  
 Քո շարժումներդ արտագրէ ինքդ քեզ:

Ում որ շատ են սիրում քեզ այնպէս պահէ.  
 Ի՞նչ է, իրականք քեզ այնպէս նայէ.  
 Քո գործերդ ինքդ քեզի բացատրէ  
 Դէմքդ ինքդ գծագրէ ինքդ քեզ:

Մարդիկ կ'ասեն եկ համոզվեր մեզանով,  
 Գործերդ մի շարունակէ քեզանով.  
 Փոքր խորիէ խեղճ Սմբատիս վերայով  
 Մտածելով կառավարէ ինքդ քեզ:


## ԲԱԳՈՒՍՈՒԼԻ

Սրտիս մէջը հագար ու մէկ վերքեր կան,  
 Մէկ յոյս անգամ տեղ ու նար անող չունիմ.  
 Ամեն կերպ չարչարանքների մէջ ընկայ,  
 Ազատվելու հնար յոյս տվող չունիմ:

Հասակս եռեսուն իննը ամ հասած,  
 Ներկայ ոչ կենդանի եմ ոչ էլ նիւտ մեռած.  
 Մի թշուառ պանդուխտ եմ կարօտով վառված  
 Մտերիմ ցաւակից հոգ տանող չունիմ:

Տէր իմ միայն քեզ եմ անցնում իմ դատս,  
 Աղաչում եմ ընդունիր այս գանգատս,  
 Մի անգգայ խլեց ձեռքէս պահմանս,  
 Իրականութիւնը վկայող չունիմ:

Դառն տարակուսի մէջ եմ արածամ.  
 Այս դիպվածով պիտի տանջվիմ փշանամ.  
 Խեղճ Սմբատս գուցէ օտար մահանամ,  
 Գոնեայ վրաս ողբի ձայն հանող չունիմ:



## ՀԱՆԵԼՈՒԿ Դ.

Յանկարծ երեվեցան աչքիս, երկու գեղեցիկ պատկեր.  
 Ձեռագործ են, նիւղ մէկ նման, դատողութեան դէմ տարբեր.  
 Հիմա շինել եմ հանելուկ, որպէս ինքս էլ բանաստեղծ.  
 Ուծով երբեմն փոքր են, երբեմն հազարապետներ:



Այս բաները որպէս գործիք, մէկ մը էլ ուրիշ գնեցի,  
 Երեքին երկու անուն կար, մէկին էլ նոր կնքեցի.  
 Մէկին գլխիվայր կախեցի, երկուսն էլ նիւղ տնկեցի.  
 Զարմացայ այս տեսարանին, կուգեմ պատմող վարպետներ:

Այս գործիքները երեք են, բայց հանելուկս մէկով.  
 Հեշտ խնդիր է թէ գումարես, այր ու բենի հաշիւով,  
 Թէ չես գտնի, կամ գրէ ինձ, կամ արի Սմբատիս քով.  
 Ուրախութեամբ բացատրեմ թէ ունիս վեց զոյգ տալեր:

— † —

## ԿԵԱՆՔԻ ԳԱՂՏՆԻՔ

Ով մարդ, որ կայ երջանկութիւն  
 Քեզ վատ դուրսեամբ մի պահէ.  
 Թողած սէր եւ ազնիւութիւն  
 Միտքդ չարութեամբ մի պահէ:

Թէ կը փափաքիս քո աչքին,  
 Զգայ արտասունք լալաքին,  
 Ուղարկելու քո գաւազին  
 Միտքդ օտարութեան, մի պահէ:

Մեծ ձուգ դուրս չի գայ առվակեն,  
 Լոյս դուրս չի գայ գետնի տակեն,  
 Անգամ մի խօսք անառակեն  
 Քո բնութեան մէջ մի պահէ:

Երգիչ Սմբատ Աւագեան դու,  
 Բաւական կաց քո բախթով դու,  
 Աննման սիրականով դու,  
 Սիրտդ ուրախութեամբ մի պահէ:

## Ս Ի Ր Տ Ը

Սիրտը արարածոց մի մեծ պանդոկ է,  
 Լեցուն ամեն տեսակ նպատակներով .  
 Ձեղաւ մի սիրտ գոհ ամեն մի հանոյքէ  
 Տանջվում են անթիւ աւերակներով :

Մատաղ սրտի անկիւնում մի ահագին  
 Սէրն է թագաւորող ներքին արտաքին  
 Շատերն հասնում են այդ մի փափաքին  
 Երբեմն խորտակվում են անառակներով :

Բնական է, սրտի յոյսը չի հատվի,  
 Տարակուսանքներն էլ նոյնպէս չեն գատվի .  
 Միշտ մրցում են յաղթողը չի նկատվի,  
 Մարդիկ այսպէս կուգան կ'երթան դարերով :

Աշխարհն հետզհետէ գեղեցկանում է,  
 Սէրն էլ յուզմունքներով ազահանում է,  
 Բացի մահից ամեն բան պահանջում է  
 Կարծես վնասական բունն հնարներով :

Տաղանդ բարի, կեղծ, դավաճան, լաց խնդում  
 Սրտի դատողութեամբ առնում են ծագում .  
 Սմբատ ինքդ էլ շատ բանի ես փափաքում  
 Սրտիդ մանիր տվող նախարակներով :



## ԿԱՐԱՎԱՆԸ

Դէպ ինձ գալող կարավանին,  
Մատաղ ե դեռահաս կեանքս.  
Նրանց բերող նանապարհին,  
Մատաղ եմ դեռահաս կեանքս:

Ծնողներէս ինծի համար,  
Հարկաւ. բերած կլլին մի բառ.  
Մեծ ու փոքրներիս համար,  
Մատաղ իմ դեռահաս կեանքս:

Սիրտս եղբայր իմ փառալիր,  
Իմ հոգսերին եղիր ընկեր.  
Հայրենիքիս աւետաբեր  
Մատաղ իմ դեռահաս կեանքս:

Երգիչ Սմբատս դառն օտար,  
Կակամել է լեզուս նարտար  
Ազգիս լուր բերողի համար  
Մատաղ իմ դեռահաս կեանքս:

— † —


## ՏԱՌԵՐԻ ՀԵՐԹՈՎ

Ամբողջ Բաց Քաղտնիք պէտք է մնալու,  
Դարիս երբէք Զարգացում չէ պահելը.  
Էս Ըստոր Թշնամուց ազատ զգալու  
Փամանակն է Իսկոյն Լաւ դիրք շահելը:

Խարդախ ծնված Կռապաշտներ տանիկից,  
Հային Ձախող Ղարդաշ մօնգոլ բանակից,  
Ճարիր Մէկ Յաղթութեան կերպ հայրենակից  
Նայիր Շարան Որբերուդ կաշկանդվելը:

Չար Պօռնիկին Ջախջախելու աշխատիր.  
Ռախար Սատանաին վնասկան դատիր.  
Տանջված Բոպեներուդ Յաւին նկատիր.  
Փորձէ՛ք քաջ եւ տուր իւր վայելը:

Օղու Ֆիննանի պէս ընկած ձեռքէ՛ ձեռք.  
Բա՛ւ է այլոց խրախնանը զարդարենք.  
Սմբատիս խնդիրն է Հայեր միացէ՛ք.  
Այսպիսով է ազատութիւնն նարելը:



### ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻՆ

Մարդուս, իր պապերի բնութիւնիցը,  
Իւր բնութեան մէջը մի մաս կը լինի.  
Ուսումն աւարտողի գիտութիւնիցը,  
Անուսումինը անշուշտ պակաս կը լինի:

Փայտի հոտ դուրս չի գայ քար ածուխներից.  
Մարդուս օգուտ չի գայ իւր ատողներից,  
Ջանասէր այգեպանի պտուղներից  
Ծոյլ այգեպանինը նվազ կը լինի:

Մարդ որ լինի կամ մեղաւոր կամ արդար,  
Նա երկու կողմից էլ ունի մի պատճառ.  
Ծարավեալի սիրտը գովելու համար,  
Մի բաժակ սառն ջուր որ տաս կը լինի:



Մարդիկ խեղճ Սմբատիս յարգելու համար,  
 Պէտք է գիտնան երգիս իմաստն անպատճառ.  
 Թէ կուգես քո միտքդ, մտքիս հաւասար,  
 Որ ուշադրութեամբ կարդաս, կը լինի:

— + —

## ՔԵՉ ՏԵՍՆԵԼՈՒ

Քեզ տեսնելուց վարկեանաչափ,  
 Խելքս գլխէս առար սիրուն.  
 Ունեբերդ աղեղ հոյակապ  
 Որով չկայ քեզ պէս սիրուն:

Խնդրեմ, ինձնից մի խնայէ,  
 Հանի կրկին դէպ ինձ նայէ,  
 Սիրելոյդ համբոյր ընծայէ,  
 Կուգես սիրտս տամ քեզ սիրուն:

Լսիր խնդիրը Սմբատիս,  
 Քեզանով խելափար եմ ես.  
 Եթէ Աստուածդ կը սիրես  
 Պէտք չէ կատակ հաւելես սիրուն:

— + —

## ԵԹԷ ԿՈՒԶԵՍ

Պատիւ յարգանք ունենալը շատ հեշտ է,  
 Մարդ որ խաբեբայ ու սուտ խօսող չեղնի.  
 Թագաւորից գիտուն ուժեղ պարկերտ է,  
 Ով որ մի դանեկան ուրացող չեղնի:

Մարդ կը գտնի իւր ապրուստը հեշտութեամբ,  
 Որ աշխատի նարպիկ գործ է հեշտութեամբ.  
 Կը բարձրացնէ իւր անունը անձամբ,  
 Թէ որ դավանան ու հարբեցող չեղնի:

Մարդու գործքը գաղափարից կախված է,  
 Անառակի իւր պատիւը ծախված է.  
 Երկշոտ մարդը փորցանքով շաղաղված է  
 Պիտի նա եռանդով խնդացող չեղնի:

Մարդ որ խօսի նարտար կերպով համարձակ,  
 Իւր գործը կ'անէ յաջողակ, արագ.  
 Եթէ կուգէ այդպէս լինի շարունակ,  
 Ճիշտ այդ պարագային հպարտացող չեղնի:

Փափաք ունեցողը վեհ անվան համար  
 Երբէք լինելու չէ չարութեան պատճառ.  
 Անպատվելուց երկշոտն օրական հազար,  
 Պէտք է որ համբերէ նեղացող չեղնի:

Գերդաստանին իւր ուժի չափ չօգնողին  
 Զկայ նրան մի բարեկամ նոր կամ հին.  
 Այդպէս հազարաւոր մարդկանցից մինին  
 Արժանի է որ նրան մի օգնող չեղնի:

Ով որ ապրի գերդաստանով հաւասար,  
 Իւր ճախորդութիւնը չի տեսէ երկար.  
 Օրը կ'անցնի մինչեւ մահը ծաղրաբար,  
 Նա պիտի մի վարկեան անյաջող չեղնի:



Բարեխեղն ազգասէր զգայուն մարդուն,  
Կը լինի ամեն կերպ համեստ բնութիւն,  
Օտար երկրում որ տան քաղաւորութիւն,  
Պիտի հայրենիքին մօռացող չեղնի:

Նքէ գաղտնիք ունիս, սրտումդ պահէ,  
Ուղիղ չգիտցածդ նիւտ մի վկայէ.  
Մարդուս քաջը նա է, ինչ որ մտածէ,  
Կատարելուց առաջ իմացող չեղնի:

Մարդ կայ վայելում է շարունակ խնդում,  
Մարդ կայ ծնված օրից տխուր ու տրտում.  
Սմբատիս վերքերը ամբողջ մամուլում,  
Կարելի է մի մարդ հասկացող չեղնի:

+

## ՔԱՂՅԱԾ ԺԱՄՈՒՍ

Քաղցած ժամիս մի պատառ հաց տվողին,  
Պիտի նրան իմ աչքերէս շատ սիրեմ:  
Տկարութեանս համար բժիշկ բերողին  
Պիտի նրան եղբայրներէս շատ սիրեմ:

Իմ վերքերս շատ են, անչափ ահագին,  
Ծառ, տուն եղար պաշտպան իմ օգնած կեանքին  
Թափած տերեւներիդ փամակէս տակին,  
Պիտի նրանց օքաղներէ շատ սիրեմ:

Երգիչ Սմբատս հասկանալով իր պէտքը,  
Գիտցայ ինչով կը փարատվի իմ վերքը.  
Երգիչ Զիվանի իւր ասած մի երգը  
Պիտի ամբողջ երգարանէս շատ սիրեմ:

## ՈՒՐԻՇԻ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՈՎ

Ուրիշի կարողութիւնով  
 Ձեմ ուզէ անձս հրնվել  
 Եղբորս ազնիւ գիտութիւնով  
 Ձեմ ուզէ իշխան ընտրվել:

Ամեն ինչ կ'եղնի կանունով  
 Մարգս մարդ է վեհ անունով,  
 Ուրիշի անկարգութիւնով,  
 Ձեմ ուզէ ամօթանք կրել:

Կուգեմ անձս պարկեւտ ախաւ,  
 Չարախօսութիւններից զատ,  
 Լինիմ հարուստ վարժով խիստ վատ,  
 Ձեմ ուզէ ինձ վերաբերել:

Մարդկանց անկարգութիւնիցը,  
 Ջգվելի բռնութիւնիցը,  
 Իւր անվան կեցութիւնիցը,  
 Ձեմ ուզէ դէպի ինձ ծռել:

Մարդս որ ուղիղ իմանայ,  
 Մէկ իւր անունը կը մնայ.  
 Աշխարհն ունայն է կը գնայ,  
 Տէրն է բնականից վռնել:

Ով որ ինձ յարգում է, կուգեմ  
 Պատիւն ու յարգանքը լսեմ.  
 Հազարներով թշնամու դէմ,  
 Քաջի պէս խօսի չլռել:



Որ լինիմ դառն մուրացկան,  
Եւ ունենամ մեծ գերդաստան.  
Համար, նրանց պաշտպանութեան  
Ձեմ ուզէ գուր մէկին մրել:

Ին բնութեան ծառայեցի,  
Մէկից օգուտ չկրեցի.  
Ում որ բարեկամ ընտրեցի,  
Նա ուզեց ինձ խայտառակել:

Ում որ աստղը չեղնի սիրուն,  
Նա բնաւ տուր չի գայ մէկուն.  
Արեալոյսից մինչեւ իրիկուն  
Ուրախ կեանք չի անցկացնել:

Երգիչ Սմբատիս բերնիցը,  
Ձի շեղվի ուղղութեան գիծը,  
Խափ խափայ կեղծ խօսքերիցը,  
Ձեմ ուզէ մի բառ սովորել:

## Թ Ա Ժ Լ Ի Ս

Օրս քաղցրանալու փոխան ինձ վերայ,  
Մէկը մէկից ինձ վերայով դառ անցաւ.  
Հասակս եռեսուն իննը համարեայ,  
Դեռ կրում եմ մինչեւ այսօր դառն ցաւ:

Բազ՛ք, փշացայ քո կեղծաւոր խօսալով,  
Կեանքս անցրիք քո անպիտան խոզ հալով,  
Պարպիք երակներուս արիւնն խոյսալով,  
Քեզնով ժամերս երկչուտ ու վատթար անցաւ:

Բա՛ղդ, ասիք ընկերով կեանքերից օդ առ .  
 Տուեց Ղատին, ինիի հետ ինձ Օ տառ  
 Նորա ձեռքով մինչեւ հիմա դեռ օտար  
 Ճնշելով, ինձ վերայ ֆանի՞ դառ՝ անցաւ :

Երգիչ Սմբատ մարդուց ընծայ կամք տես առ  
 Սրտումդ արնիջ բերք է շինած կամ քէ սար  
 Դեռ բաւ չէ քեզ այդքան տանջանքներ տեսար  
 Դարձեալ ինքդ քեզ ասում ես տար ան ցան :

+

## ՍԻՐԵԼ ԵՍ

Ես սիրել եմ պիտի սիրեմ,  
 Թեկուզ մութացկան դառնամ .  
 Քանի ողջ եմ պիտի տիրեմ .  
 Գուցէ այսպէսով մահանամ :

Լուսինի նման պատկերի,  
 Համար եղե եմ նիւտ գրեի,  
 Ամեն գործս թողած թերի,  
 Ճիւտ նրանով կ'ուրախանամ :

Գոյնը առած վարդի թերից,  
 Գեղեցիկ է հագարներից,  
 Ես նրա պէս սիրահարից,  
 Հարկ չէ գառվիմ ու մօռանամ :

Երգիչ Սմբատս վնասած,  
 Սիրում եմ նրան բացէ՛ բաց .  
 Կարծես պահմաններով կապված  
 Պէտք է անվերջ սիրող մնամ :



## ՄԷԿ ԱՆՆՄԱՆ

Մէկ աննման աշխարհի մէջ ֆեզանից,  
 Զի գտնվի ոչ մի երկիր ոչ մի տեղ.  
 Մէկ պատվական աշխարհի մէջ ֆեզանից  
 Զի գտնվի ոչ մի երկիր ոչ մի տեղ:

Խարտեաւ աչքեր աշխարհի մէջ ֆեզանից,  
 Կէ՛ն սեւ ունիք աշխարհի էջ ֆեզանից.  
 Սիրուն պատկեր աշխարհի մէջ ֆեզանից,  
 Զի գտնվի ոչ մի երկիր ոչ մի տեղ:

Քաղցր խօսող աշխարհի մէջ ֆեզանից.  
 Կեանքեր վարող աշխարհի մէջ ֆեզանից.  
 Ինձի սիրող աշխարհի մէջ ֆեզանից,  
 Զի գտնվի ոչ մի երկիր ոչ մի տեղ:

Սմբատ միայն աշխարհի մէջ ֆեզանից,  
 Երգեր գրէ աշխարհի մէջ ֆեզանից.  
 Ճիշտ սիրական աշխարհի մէջ ֆեզանից  
 Զի գտնվի ոչ մի երկիր ոչ մի տեղ:

— † —

## ՏԷՐԸ ՎԵՐԱԴԱՐՑՆՈՂ Է

Ինչ որ կամիս ընկերոջդ դառահաս,  
 Տէրը վերադարձնող է դէպի ֆեզ.  
 Գիտցիր որ մեզ Տէր կայ կատակ չիմանաս,  
 Ինքը հաստատ ուղարկող է դէպի ֆեզ:

Օրին հազար երդում արա ինքդ քեզ,  
 Ինձ վրայով խնդում արա ինքդ քեզ,  
 Պարագայիս հրմունք արա ինքդ քեզ,  
 Գործքդ չարին վարակող է դէպի քեզ:

Սմբատս այս մասին վնիռ կուգե՞մ Տէր,  
 Խնդիրս, կեանքիս մէջ հսկել կուգե՞մ Տէր,  
 Դէպքերիս պատճառին, պատժեր կուգե՞մ Տէր,  
 Երգիչ Սմբատս աղաչող է դէպի քեզ:

— + —

## ԱԶԳԵՐ ՈՒՆԻՆ

Ազգեր ունին իրանց սեփական աշխարհ,  
 Դարձեալ անբաւական, տալում են բողոք.  
 Ունին մեծ դատաւոր, գործիչներ արդար,  
 Տանում են իւր ազգի համար ամեն հոգ:

Ի սկզբանն է հայի ծագումը Նոյից,  
 Մեծ աշխարհի տէր էին հպարտ լեռնակից.  
 Դարերով զրգվել են ամեն մի բանից,  
 Ընկած քափառական, պանդոք է պանդոք:

Որքան որ աշխարհը հըննայ, ծերանայ,  
 Հայքի սուրբ անունը երբէք չի վերնայ.  
 Որովհետեւ նա ունի մի մեծ վկայ,  
 Մասիսը իւր մերձակայ դաշտերով բարոք:

Հայ սերունդը միայն դարերով քնած,  
 Ամեն մէկը ափշուքեան մէջ ընկղմած,  
 Սմբատ, քեզ պէս հազարը եկաւ ու գնաց,  
 Թողած մեզ յիշատակ, տխուր երգ մը լոկ:




## ՔԵԶՆԻՑ ԲԱԺՆՈՒԵԼԷՍ

Քեզնից բաժանվելես վերջ իմ սիրահար,  
 Շրթունքներէս բնաւ ծաղրանալ չկայ.  
 Աննման սիրուն իմ գեղամեծար  
 Առանց քեզ ինձ հաստատ ուրախնալ չկայ:

Մինչեւ մահըս սիրտս չի գառվի քեզնից,  
 Զգվելի վերքերս չի գառվի ինձնից,  
 Սեւ աչքեր ունեւոր չի գառվի ինձնից  
 Դէմքդ, մահ վարկեանիս մօռանալ չկայ:

Թող վերքերը սիրտս շարունակ բանի,  
 Ինչպէս որ մեր հայոց քաղաքը Անի.  
 Աշխարհի մէջ քեզնից գառ ոչ մի բանի,  
 Վերայ Սմբատիս մօտ հիանալ չկայ:



## ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿ

Կեանքիս վերայ վիճակարան բացեցի,  
 Տրտմութիւնից բացի, մի լուր չասաւ ինձ.  
 Գլխիս գալածները ուրեւ մտածեցի,  
 Պատմելով մանրամասն եկաւ գտաւ ինձ:

Բաղքս ինձ հաստատ զգվեցրաւ ինձանից,  
 Անմարելի վերք ցոյց տվեց վիճակս ինձ.  
 Այս ունայն բովանդակ աշխարհի կեանքից,  
 Անգամ վարկեան խնդում ցոյց չտուաւ ինձ:

Ով կուգէ լուր երգիչ Սմբատէս կեանքին,  
Դեռ բան չեմ հասկացել դառն աշխարհին,  
Լսողներն ինչ տեսակ կուգեն նշմարեն,  
Բախթ-ս այսպէս դրօշման արժան տեսաւ ինձ:

— † —

### ԲԱԽՏԻՍ ԴԷՄ

Յաջողակ, դառն օրերը զիս  
Համար գուգան ու կերթան միշտ.  
Զանազան լրտեսների պէս,  
Տարբեր լուրեր ցոյց կուտան միշտ:

Ուղիղ տասնուհինգ ամ է որ,  
Դեռ չեմ տեսել երջանիկ օր,  
Սիրտս տխուր միշտ սգաւոր,  
Մահս եմ փնտռում օրական միշտ:

Երգիչ Սմբատն եմ տարաբախթ,  
Այսուհետեւ տխուր անխախթ,  
Սեւ բախթ-իցըս միշտ արերախթ,  
Ընկերներն ինձ ման գուգան միշտ:

— † —

### ՀԱՌԱԶԱՆՔՍ

Ո՛վ Տէր իմ Տէր, երկնային վեհ թագաւոր,  
Լսի՛ր մեր այս խմբից աղաչանքներս.  
Մի թողնիր մեզ այսպէս պանդուխթ ու մօլոր,  
Զատէ մեզնից դառն չարչարանքներս:



Թողած հայր ու մայր եւ առանց եղբայր,  
Կարօտութեան մէջ ենք բոլորս հաւասար.  
Սրտերս տխուր աւերակ երկար,  
Խնայէ մեզ տեսնել նպատակներս:

Խնդրում եմք Քեզնից ողջ ընկերներով,  
Յոյսով եմք Քո երած բարեւոյթումով,  
Տուր որ արժանանամ մեծ համբոյրներով,  
Առնել գերդաստանից գով փափաքներս:

Եղբայրք, խմենք բաժակ այս խնդրի սիրոյն,  
Խնդրենք կեանք Տէրոջմէ մեր ընկերներուն.  
Մայր հայրենիքում սպասողներուն,  
Սմբատս կը գրենք ներկայ ջանքերս:

+

## ՄԱՐԴԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Հարկաւ մի բան պիտի խօսիմ ընկերներ,  
Ձեր անվանը ու պատիւին դէք օգուտ.  
Ով որ գուգէ տեսնել հազար կերպ վէրքեր,  
Թոհ լինի պօռնիկ իմ բարեկամ հմուտ:

Քեզնից անյայտ խելֆդ գլխէդ կառնի նիւտ,  
Թէ դրամ ունեցար քեզ կը սիրէ միւտ.  
Որ չունեցար սրտի մէջտ կ'ընկնի վիւտ,  
Օրից օր ցոյց կ'տայ դէպքերը պատուով:

Թէ որ ուզես նրան քեզ սիրել երկար,  
Ունեցիր գրպանդ դրամ անպատճառ.  
Թէ չունեցար, քեզ հետ որ խօսի մի բառ,  
Ձեռն իրաւ կերելի, բայց գաղտնիքը սուտ:

Երգիչ Սմբատ պատմէ ինչ որ գիտես դուն,  
Թող այս երգդ աշխարհի մէջ մնայուն.  
Ով որ գուգէ յարգել ինքն իրեն իսկոյն  
Թող մտածէ թէ ինչ եկաւ քո գլխուդ:

— † —

## ՔԷՇԻՇ ՕՂԼԻ

Հագարից մի մարդ չի լինի զգայուն,  
Որպէս մարդկանց նպատակը կատարող.  
Առանցի իւր օգտին իւր Աստուծոյ սիրոյն  
Զկայ մէկի վերքերին հնար հարող:

Վերջապէս յոյս չկայ ոչ մի բան ձրի,  
Դառել ենք միշտ ազահուքեանը գերի.  
Անգամ դիտմամբ շեղված գաղափարների  
Համար, չկայ բարի խրատ բառբառող:

Մարդիկ մարդկանց բարեւ տալուց պատվելուց,  
Կարծում են թէ ունի խնդիր տարբեր լուծ.  
Պատնառ գանձին ու չարերին տարվելուց,  
Զկայ ուրիշի պատվին պատիւ համարող:

Երգիչ Սմբատիս ականջին անխնամ,  
Դիպնում է այսպէս առարկեք արածամ.  
Այդպէս մարդկանց համար մինչեւի անգամ,  
Զկայ աշխարհի մէջ մի մարդ նախատող:



## ԿԱՄՔԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Մարդ ինչ որ կարող է չանէ լիօժին,  
Յիմարների դասակարգին կը հաշվեն.  
Գիտուն անձը խենթ ցոյց տայ բոլորովին  
Խաչագող կեղծերի շարքին կը հաշվեն:

Ինչ որ գիտես խօսի իր դէմ մարդի պէս,  
Դէմքդ զվարթ ցոյց տուր շէնք վարդի պէս.  
Ոչ քէ ծածուկ նախանձոտ կախարդի պէս,  
Ուղիղ վատդարների վարքին կը հաշվեն:

Եթէ որ չգրեմ այսպէս շարունակ,  
Ամբողջ իմ երգերս կը հաշվեն կատակ.  
Լինիս դու վեհ քաջ մարդ գրպանդ դատարկ,  
Բոլորովին ախֆատ, պարտքդ հին, կը հաշվեն:

Գործեր, գերդաստանին ջանք դնողի հետ,  
Ման եկ քո անունդ քանզի գնողի հետ.  
Գաղտնիք տուր ընկնելուց վերցնողի հետ,  
Թէ չէ Սմբատիս պէս զարկին կը հաշվեն:


— — — † — — —

## ԳՈՂՈՒԹԻՒՆՍ

Գոհ եմ այս երեկոյ քո ինձ յարգելդ,  
Աշխարհի մէջ քո պէս ընկեր մ'էլ կուգեմ.  
Մեծ խմբի մէջըն ինձ հրաւիրելդ  
Դէպ ինձ այդպէս վերաբերող մ'էլ կուգեմ:

Յոյց վտած յարգանքդ, ինձի լաւ գիտեմ.  
 Որ չյիշեմ համարեայ քէ անմիտ եմ.  
 Յարգելդ, այս երգիս նիւթը պիտ անեմ  
 Խնջոյքներում յայտարարել մէլ կուգեմ:

Քեզի նման ընկերները հիւրասէր,  
 Կարելի չէ շնորհներդ տարբերել.  
 Սմբատս էլ ձեզ համար մի անկեղծ ընկեր,  
 Խնդրեմ ներողութիւն, մեզնել մ'էլ կուգեմ:



## ՈՒՂԵՐՁ ՍԻՐՈՒՀՈՒՆ

Ով նորաբոյս վարդ սիրական,  
 Քո ձեռքիդ խենթ վատքար եղայ.  
 Ողջ աշխարհին զարդ սիրական  
 Վարքից զուրգ քեզ համար եղայ:

Սիրուն, ինձնից ի՞նչ կը հարցնես,  
 Բնական կեանքիս տեղեակ չես.  
 Կուգես գիտնալ քեզանով ես  
 Հոգերին հաւասար եղայ:

Յնցող սուր ես եղել կեանքիս,  
 Արգելք դառար նպատակիս.  
 Վնոած կարն ժամանակիս  
 Հիմայ երկար օտար եղայ:

Քաղցր լեզվիդ դէմ գոհ եմ ես,  
 Քո հրնվելուց միշտ գոհ եմ ես.  
 Սմբատս որ վրդով եմ ես  
 Նամակիս դէմ շիվար եղայ:



## ՂԱԶՂԲԱՂԻ

Բաժանմանս վարկեանք մօտեցել է  
 Ես ինչպէս գատովեմ ֆեզանից սիրական,  
 Բնութիւնս վրդով եւ վատացել է  
 Ես ի՞նչպէս գատովեմ ֆեզանից սիրական:

Հինգ ամ կեանք եմ վարել շարունակ ֆեզ հետ  
 Քեզնով եղայ ամեն կեանքերի վարպետ,  
 Մինչեւ մահս ախ պիտի անեմ ձեռքիդ  
 Ես ի՞նչպէս գատովեմ ֆեզանից սիրական:

Սմբատիս մօտ ֆեզնից անդրանիկ չկայ,  
 Լեզվիս վերայ սրտիս խփող գնդակ կայ,  
 Քանի որ ֆեզ մնաս բարով պիտի տայ  
 Ես ի՞նչպէս գատովեմ ֆեզանից սիրական:

—†—

## ՍՐՏԻՍ ԽՈՑԵՐԸ

Տարաբախտութիւնս գիտցող ընկերներ,  
 Շատ դժվար է եւ սուկալի է, ասէք.  
 Սիրելով կեանքիս մէջ մտնող ընկերներ  
 Սրտիս կայծերն անմարելի է, ասէք:

Անգոյթ բաղքս եղաւ ինչպէս փախարակ,  
 Մանում է իմ գլխիս դառնութիւն արագ,  
 Հոգ տանողներ իմ այս սրտիս աւերակ,  
 Նորոգող վարպետ կարելի է, ասէք:

Օրերս անցնում են խաւար ու մութը,  
կարծես հատել է իմ սրտիցս զոյթը.  
Սմբատիս հոգսերու համարն ու գիւտը  
Գուցէ մի կերպ իմանալի է, ասէ՛ք:

— † —

### Գ Ո Ւ Թ

Որ ամբողջ աշխարհն ինձ անցնեն այսօր,  
իմ աւերակ սիրտս ուրախ չի լինի.  
Պատիւս բազմանայ յարգանքս օրէջ օր,  
իմ աւերակ սիրտս ուրախ չի լինի:

Ես միայն մէկն եմ սիրում ճշտ սրտով,  
Նրանով ուրախ եմ նրանով վրդով.  
Թէ նրան չտեսնեմ աովողջ իմ աչքով,  
իմ աւերակ սիրտս ուրախ չի լինի:

Խեղճ Սմբատիս կեանքը անցնում է արագ.  
Արեւս ամպի տակ, սիրտս է աւերակ.  
Գաբրիէլ եղբօրս կարօտով փափակ,  
իմ աւերակ սիրտս ուրախ չի լինի:

— † —

### ՃՇՄԱՐԻՏ ԸՆԿԵՐԸ

Այս իմ դառն անտանելի վերքերէս  
Կուգեմ մի անձ ինձնից հարցանող մաս մաս.  
Նրգերէս խոր կեանքէն ու նամակներէս  
Գուգեմ իմ դէպքերս իմացող մաս մաս:



Օտար երկրում միշտ չարչարանքի մէջ եմ,  
Անվերջ տարբեր դառն տանջանքի մէջ եմ,  
Ազգիս կարօտ, տարակուսանքի մէջ եմ,  
Գուգեմ տարաբախքիս հոգ տանող մաս մաս:

Ով որ ծնողքս միշտ մխիթարէ,  
Մասիս, ոյս տայ նրանց, խնդիրս կատարէ.  
Համարեայ իւր ողջ կեանքն ինձ կ'ընծայէ,  
Զեմ լինի իւր բարիքն ուրացող մաս մաս:

Ով որ սիրէ, յարգէ, երգիչ Սմբատիս,  
Թէ որ գուգէ տալ ոյս հրջանք իմ սրտիս,  
Ի սէր Աստուծոյ դէպի իմ ծնողներիս  
Վերայ, քող չլինի բարկացող մաս մաս:

—†—

## ՀԱՐՈՒՍՏԻ ԽԻՂՃԸ

Նեղութիւն չտեսնող հարուստ անզգան,  
Ամեն պարագայի խեղճին ատում է.  
Զի կարծում ստեղծված մարդ է իւր նման,  
Հաւասարած կենդանու, նկատում է:

Ախֆատ մարդը միշտ խնդրող է անպահման,  
Ապրուստի նշտութեամբ պատնառով միայն,  
Իւր խնդիրը կատարելու դէմ, փոխան  
Լարելով քաղաքտներ իրմից գատում է:

Ուղիղ չի կարծում խեղճի ասածը,  
Երազ է համարում աչքի տեսածը.  
Երգիչ Սմբատի իւր այս մտածածը  
Կեղծոտ ժպիտներով նա ծաղրանում է:

## ԹԱՆԿԱԳԻՆ ՆԱՄԱԿԸ

Ձեր այս ոսկետող նամակը,  
Ամեն հոգսերէս զատեց ինձ.  
Խնդրիս կատարման ջանքը  
Հին վերքերէս ազատեց ինձ:

Ապացոյցն ինձ ընկեր վերջին,  
Ոսկետող նամակդ է անգին.  
Կարծես մութ խաւարի մէջէն  
Մեծ աւետիք լոյս պատեց ինձ:

Պիտի խօսիմ բարի մաղթանք,  
Երգերովս պատիւ յարգանք,  
Պատիւ այն քաջին շարունակ  
Որպէս մի մարդ նկատեց ինձ:

Սմբատիս խեղճ տխուր գոյնը,  
Փոփոխեց Ձեր յարգութիւնը.  
Ձեր նամակի բնութիւնը  
Կատարեալ գնահատեց ինձ:

— † —

## Թ ՈՒ Թ ՈՒ Ն Ս

Այս երկու, թութունիս համար խնդում եմ,  
Ձեմ յիշում հազարներ կորցրածներս.  
Սրանցով յոյս դրած սիրտս պնդում եմ,  
Մօռանալով իմ հաստատ պայմաններս:



Սիրտս տխուր տրտում գրպանս անդրամ,  
Այլոց բամբասանփի տակն եմ արածամ.  
Վերֆս մէկ չէ, ես որ մէկին մտիկ տամ,  
Զգվել եմ բաղթիս հալածանքներես:

Մտածելով իմ հայրենեաց վիճակին,  
Օրերս անցնում եմ տխուր լալագին.  
Սմբատ, մէկ տուն մէջն այս ունայն աշխարհին  
Հագար վերքերի տէր ու խիստ յիմար ես:

+

### ԱՐԵԳԱԿԸ ԲԱՐՁՐԱՆԱԼՈՒՑ

Արեգակը բարձրանալուց փամաֆէդ,  
Հայաստանն է լուսաւորում ընդ առաջ.  
Հայի կեդրոն մեծ Արարատ, փափափիդ  
Հասար, հայ սերունդի հայտուկներով փաջ:

Դարերով սպասում էին այս օրվան,  
Կրկին անգամ հայ դրօշատներ ծածան.  
Փառք որ բարձրացած է հիմայ բաւական,  
Վարդ մանիշակ ծաղիկներիդ միացած:

Վարդան, Վահան, Արամի պէս ազգասէր,  
Ունիս ազնիւ փաջեր, տասնեակ հազարներ.  
Ուսուցիչ, դատաւորք եւ գորավարներ,  
Ամենք իւր յարմար գործին եմ մտած:

Հայ բանակը պտոյտ տալով մերձակատ,  
Կարգով շարված զինավարժվում եմ ազատ.  
Փառքը ֆռնն է, որ ներկայ ես Արարատ.  
Մմբատս էլ զուրկ օտար անկիւնում ընկած:



## ՀԱՅ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Այս օր մի հայ գեղեցկուհում հանդիպա,  
 Սրտումս գովելու զօրութիւն քեզ,  
 Տեսայ իւր սրտի մէջ մի մեծ փափաք կայ,  
 Երբ որ շիլ աչքերը դէպ ինձ ուղղեց:

Ճիշտ նմբանիր հայի մեծատան դշտուհի,  
 Մեծ իրաւունքի տէր պարկեշտ քագուհի.  
 Արթեօք կին էր կամ երբ պիտի կարգուի,  
 Որ իւր բերնում անթիւ խնդում կատակ կայ:

Քաղցր լեզուն բառ բառ ու մեր ճիշտ սոխակ,  
 Նիւթականից բարոյական ընդունակ.  
 Կեցցէ Հայը պարկեշտ ի բնէ շարունակ,  
 Իրեն քո պէս ազնիւ մի յիշատակ կայ:

Երգիչ Սմբատ դու աշխարհներ ժուր եկար,  
 Հազարաւոր գեղեցիկների տեսար.  
 Բայց զարմանք է որ հիմա մէկում համար,  
 Սրտումդ մի անհանգչելի կրակ կայ:

— + —

## ՊԱՏԵՆԱԿԱՆ ՓԱՌՔԵՐՍ

Իմ պատանի սրտիս յոյսերը շարան,  
 Մէկիկ մէկիկ ունայնացան օրեց օր.  
 Խորիւմ էի լինելու մի մեծ մարդ իշխան,  
 Կառավարող տուն գերդաստան փառաւոր:



Փափափում էի լինել հարուստ գանձի տէր  
 Ունենալ ոչխար ու կով, ձի, եզներ.  
 Լծել երկու գուլթան, եօթը արօրներ  
 Վարձել երեք մշակ չորս ըմպիչ կալվոր:

Այս յոյսերով էլ հոգ չէի անում մի բանի,  
 Մայրս էլ յարմար լինելու մեծ ֆեյվանի,  
 Հայրս ջամբազ քող մեծ առ ու տուր անի,  
 Ես էլ նձռյգ ձիով կ'երթամ հարսնավոր:

Հարսնավոր ասելս, ահա թէ ինչպէս  
 Լաւ հագնված, բաշլղ ֆցած եմ վզես.  
 Նժոյգովս ջիլիթ խաղամ աղթեմ ես  
 Ամեն հարսանիքի լինէի ֆառ:

Այս բոլորից վերջը խորհում էի մեծ բան,  
 Շինել կարգին տուն, մարագ, մեծ այվան.  
 Դրացիք բարձկամք երբ որ մեզ հիւր գան  
 Թող կարծեն ինձ խելացի եւ բաղթաւոր:

Այն ժամանակ երբ ես խորհում էի այդ ֆան  
 Արդէն սկսած էի կարդալ ֆերական.  
 Հպարտում էի կարթալ սորվիմ բավական  
 Կը լինիմ վարժապետ կամ մեծ դատաւոր:

Մանկութիւնը գնած ես պանդուխտ դառայ  
 Այն յոյսերը ամբողջովին մօռացայ,  
 Սկսեցի մէկ իմ սիրահար դարցայ,  
 Դրավել էր ինձ իւր սէրը գօրավոր:

Սիրոյ նպատակիս հասա շատ դիւրին  
 Դեռ յիշում եմ այն բախթառօր օրերին  
 Անկարծ ընկայ պարտքերի տակ նոյն տարին  
 Վնասած ինքս իմ վնասելու պարտաւոր:


Վերջապէս եղել էի տան կառավարիչ,  
 Տանջվելով ջանք էի դնում ամեն ինչ.  
 Փոխան հարստանալու, ախտատուութիւնից  
 Ազատվելու գործում էի գիշեր գօր:

Անգոյթ բախթօս ինձ այսպէս դավանանք  
 Տնտեսական ծրագրից դուրս հանեց.  
 Զախորթելով գերդաստանից բաժանեց,  
 Օտար երկիր Ամերիկայ հեռաւոր:

Ամերիկայ մասամբ փոքր յաջողայ,  
 Բայց այս վարկեանիս անթիւ ատող կայ.  
 Միայն չեղայ ոչ վարժապետ ոչ ֆեօխվայ,  
 Դեռ մնում եմ մի հասարակ գործաւոր:

Քո վերքերդ երգիչ Սմբատ Աւագեան,  
 Քանի ողջ ես պէտք է սրտումդ մնան.  
 Կորուցիր դուն, գերդաստան ու ամեն բան,  
 Դառար այսօր անմխիթար հալեվոր:

Վ Ե Ր Զ





## ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

«ՇԻՐԱԿԻ ՆՈՒԱԳ»-ի մէջ որպէս նմուշ մի քանի հանելուկներ են գրուած, - որոնց լուծելու կերպը հաստատած եմ տառերի վերայ հետեւեալ հաշուով. —

|             |    |             |     |             |       |
|-------------|----|-------------|-----|-------------|-------|
| Ա . . . . . | 1  | Ծ . . . . . | 50  | Ջ . . . . . | 900   |
| Բ . . . . . | 2  | Կ . . . . . | 60  | Ռ . . . . . | 1000  |
| Գ . . . . . | 3  | Հ . . . . . | 70  | Ս . . . . . | 2000  |
| Դ . . . . . | 4  | Ձ . . . . . | 80  | Վ . . . . . | 3000  |
| Ե . . . . . | 5  | Ղ . . . . . | 90  | Տ . . . . . | 4000  |
| Զ . . . . . | 6  | Ճ . . . . . | 100 | Ր . . . . . | 5000  |
| Է . . . . . | 7  | Մ . . . . . | 200 | Յ . . . . . | 6000  |
| Ը . . . . . | 8  | Յ . . . . . | 300 | Ի . . . . . | 7000  |
| Թ . . . . . | 9  | Ն . . . . . | 400 | Փ . . . . . | 8000  |
| Ժ . . . . . | 10 | Շ . . . . . | 500 | Ք . . . . . | 9000  |
| Ի . . . . . | 20 | Ո . . . . . | 600 | Օ . . . . . | 10000 |
| Լ . . . . . | 30 | Զ . . . . . | 700 | Ֆ . . . . . | 20000 |
| Խ . . . . . | 40 | Պ . . . . . | 800 |             |       |

— † —

## ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐՈՒ ՀԱՇԻՒՆԵՐԸ

|                                   |              |
|-----------------------------------|--------------|
| Հանելուկ Ա. — ՍԲ. ԱՍՏՈՒԱԾ . . . . | 14602, 13652 |
| Հանելուկ Բ. — ՈՒՍՈՒՄՆ . . . . .   | 17800        |
| Հանելուկ Գ. — ՍՄԲԱՏ . . . . .     | 6203         |
| Հանելուկ Դ. — 69 ՎԵՑ . . . . .    | 9005         |

Ս. ԱՌԱԳԵԱՆ

## ՑԱՆԿ ՆԻԻԹԵՐՈՒ

|                                 | Էջ  |
|---------------------------------|-----|
| Ազգեր Ունին . . . . .           | 106 |
| Աղերսանք . . . . .              | 74  |
| Անարժան Սէրը . . . . .          | 55  |
| Անզգայ Մեծասիրտ Մարդը . . . . . | 15  |
| Անկեղծ Սէրը . . . . .           | 65  |
| Անմիտ Գոռոզ . . . . .           | 54  |
| Անխուսափելին . . . . .          | 98  |
| Անպատիւ Կեղծ . . . . .          | 92  |
| Աշխարհ Հայաստան . . . . .       | 67  |
| Արդեօք Յիշում ես . . . . .      | 52  |
| Առ Նամակը Սիրելուցդ . . . . .   | 88  |
| Արեգակը Բարձրանալուց . . . . .  | 117 |
| Բագուսուլի . . . . .            | 94  |
| Բախդիս Դէմ . . . . .            | 108 |
| Բարեկամ Սիրտը . . . . .         | 20  |
| Բաղդազուռակ . . . . .           | 107 |
| Բայաթի . . . . .                | 68  |
| Բարի Մարդը . . . . .            | 16  |
| Բարի Զգացում . . . . .          | 25  |
| Բնականից Մինչեւ Հիմա . . . . .  | 17  |
| Գիտնալու Համար . . . . .        | 11  |
| Գովասանք . . . . .              | 35  |



էջ

|                    |        |
|--------------------|--------|
| Գովեստ             | 53     |
| Գոհութիւնս         | 111    |
| Գութ               | 114    |
| Դաստան             | 39     |
| Դառն վիճակիս       | 30     |
| Դատողութիւն        | 25, 79 |
| Դիվանի             | 36, 92 |
| Դրամին             | 68     |
| Եթէ կ'ուզես        | 99     |
| Եթէ Հայի Զաւակն ես | 87     |
| Երագս              | 13     |
| Երախտամօրը         | 22     |
| Երեւոյթ            | 43     |
| Երգ հրատական       | 46     |
| Երգ Հանդէսի        | 62     |
| Երկու Գոյն         | 89     |
| Թաժիկս             | 103    |
| Թանկագին Նամակը    | 116    |
| Թութունս           | 116    |
| Ի Ծննդէ Մինչեւ Մահ | 26     |
| Իմ Աէս Նեղութիւնս  | 14     |
| Իմ Եղբօրս          | 73     |
| Ի՞նչ է Պէտք        | 54     |
| Ինքնահաւանը        | 83     |

|                               | Էջ  |
|-------------------------------|-----|
| Ինֆդ Քեզ . . . . .            | 93  |
| Խարդախ Սաբրիչը . . . . .      | 75  |
| Խենդ Անպատիւ . . . . .        | 61  |
| Խնդիրս . . . . .              | 70  |
| Խրատ . . . . .                | 69  |
| Ծռյլ Գիւղացին . . . . .       | 52  |
| Կամփ Զօրութիւնը . . . . .     | 111 |
| Կատարեալ Մարդը . . . . .      | 11  |
| Կարավանը . . . . .            | 97  |
| Կարօտ եմ . . . . .            | 21  |
| Կեանքի Իմաստը . . . . .       | 21  |
| Կեանքի Գաղտնիք . . . . .      | 95  |
| Կեանքիս վրայով . . . . .      | 66  |
| Կեղծ Ընկեր . . . . .          | 26  |
| Հայ Գեղեցկուհիւմ . . . . .    | 118 |
| Հայրենասէրը . . . . .         | 81  |
| Հայրենիքիս . . . . .          | 12  |
| Հայրենիք Իմ . . . . .         | 44  |
| Հայրենիքից Զատուիլս . . . . . | 91  |
| Հանելուկ Ա. . . . .           | 80  |
| Հանելուկ Բ. . . . .           | 81  |
| Հանելուկ Գ. . . . .           | 89  |
| Հանելուկ Դ. . . . .           | 94  |
| Հառաչանքս . . . . .           | 108 |




էջ

|                                |     |
|--------------------------------|-----|
| Հարուստի Խիղճը .....           | 115 |
| Ջախորդ Օրերս .....             | 23  |
| Ղազարադի .....                 | 113 |
| Ճամարիտ Ընկերը .....           | 114 |
| Մարդկային Ընկերութիւնը .....   | 105 |
| Մարդուն Կարողութիւնը .....     | 45  |
| Մեծ Յոյս .....                 | 51  |
| Մէկ Աննաման .....              | 105 |
| Մի Քանի Ֆրեզնոցի Հայեր .....   | 79  |
| Մութ Աշխարհ .....              | 71  |
| Մրցում .....                   | 59  |
| Յաջողութեան վերայ .....        | 16  |
| Յարգանքս .....                 | 38  |
| Նախանձոտ .....                 | 42  |
| Նխշուն Դուբէիք .....           | 60  |
| Ներքող .....                   | 9   |
| Նկարագիր .....                 | 14  |
| Նոր Ախշարհ .....               | 27  |
| Շիրջրանցքը ու Բանվորները ..... | 78  |
| Ո՛վ Դեռահաս .....              | 10  |
| Որք .....                      | 47  |
| Ունայն Աշխարհ .....            | 19  |
| Ուրիշի Կարողութիւնով .....     | 102 |
| Ուղերձ Սիրուհիս .....          | 112 |

|                                  | էջ  |
|----------------------------------|-----|
| Զեմ Ուզէ . . . . .               | 61  |
| Զի Ճանչէ . . . . .               | 87  |
| Պանդուխտի երգը . . . . .         | 48  |
| Պատենական Փառքերս . . . . .      | 118 |
| Պարգուած Գաղտնիք . . . . .       | 49  |
| Պարկեշտ . . . . .                | 70  |
| Պօռատախօսը . . . . .             | 31  |
| Սիրել Եմ . . . . .               | 104 |
| Սիրուհիս . . . . .               | 27  |
| Սիրուհիս Միայն . . . . .         | 37  |
| Սիրտը . . . . .                  | 96  |
| Սիրոյ Գովասանք . . . . .         | 82  |
| Սիրոյ Գովեստ . . . . .           | 63  |
| Սիրուհուս Դէմքը . . . . .        | 72  |
| Սիրոյ Խօսքեր . . . . .           | 83  |
| Սիրոյ Կրակին . . . . .           | 45  |
| Սկզբունք . . . . .               | 36  |
| Մութանդակ . . . . .              | 32  |
| Սուր աչք . . . . .               | 84  |
| Սրտիս Խոցերը . . . . .           | 113 |
| Տաղ Սիրոյ . . . . .              | 74  |
| Տառերի Հերթով . . . . .          | 97  |
| Տէրը վերադարձնող է . . . . .     | 105 |
| Տխուր Յիշատակութիւններ . . . . . | 85  |



|                         | Էջ  |
|-------------------------|-----|
| Քաղաքն Անի .....        | 85  |
| Քաղցած ժամուս .....     | 101 |
| Քարացած Սիրտ .....      | 90  |
| Քեզնից Բաժնուելէս ..... | 107 |
| Քեզ Տեսնելու .....      | 99  |
| Քէշիշ Օղլի .....        | 110 |
| Քու Գործփիղ Համար ..... | 64  |
| Օրօրոցի Երգ .....       | 29  |







CS043

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



220026850

1-20

A <sup>II</sup> 26850

18390

18390